


**Մեկ
առողջություն
Հայաստանում**



**Մեկ առողջության
գործառնությունների և
կարողությունների գնահատում**

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ

Հիմնական թիմի անդամներն են Ռոբին Բրինը, Քնին Օլիվալը և Աստղիկ Ղազարյանը: Փորձագետ խորհրդատուները տրամադրել են հիմնարար ճշմարիտ տեղեկատվություն և պատկերացումներ: Մենք երախտապարտ ենք հետևյալ մարդիկհամագործակցելու և կարևոր ներդրում ունենալու համար:

Լուսինե Պարոնյան

ԱՆ Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի Ջոնոգ և մակաբուծային հիվանդությունների բաժնի պետ

Կարինե Գևորգյան

ԱՆ Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի Ջոնոգ և մակաբուծային հիվանդությունների բաժնի համաճարակաբան

Օլեգ Վալերիի Շչերբակով

ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի մոլեկուլային մակաբուծաբանության լաբորատորիա / Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Անասնաբուծության և անասնաբուժասանիտարական փորձաքննության հետազոտական կենտրոն

Հասմիկ Գևորգյան

ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն, Մոլեկուլային մակաբուծաբանության լաբորատորիա

Հավելյալ շնորհակալություն Ուիլյամ Քարեշին, Քեթրին Մաչալաբային և Քենդրա Ֆելիսին՝ սեմինարների կազմակերպման գործում իրենց ներդրման և աջակցության համար: Բազմաթիվ այլ անձինք, հատկապես պետական մակարդակով, ներդրում են ունեցել զեկույցի բաժինների վավերացման և բարելավման գործում, ինչպես նաև ուղղորդել են՝ կապված կարևոր նախաձեռնությունների և կոնտակտների հետ: Մենք մեր երախտագիտությունն ենք հայտնում նրանց՝ պատրաստակամորեն համագործակցելու համար: Հաշվետվողականության համար շնորհակալություն ենք հայտնում նաև երկրներին, ինչպես նաև միջկառավարական կազմակերպություններին և այլ հաստատություններին՝ տեղեկատվությունը հանրությանը հասանելի դարձնելու համար:

Այս աշխատանքը կատարվել է Առողջապահական գիտությունների միասնական ծառայությունների համալսարանի (Uniformed Services University of the Health Sciences) աջակցությամբ (մրցանակի համարը՝ HU00012010031 - *Strengthening Multisectoral Approaches to Biodefense and Biosurveillance in the Caucasus*): Տեղեկատվությունը կամ բովանդակությունը և եզրակացությունները անպայմանորեն չեն ներկայացնում Առողջապահական գիտությունների միասնական ծառայությունների

համալսարանի, Պաշտպանության նախարարության կամ ԱՄՆ կառավարության պաշտոնական դիրքորոշումը կամ քաղաքականությունը, և չեն ենթադրում որևէ պաշտոնական հաստատում: Մենք շնորհակալություն ենք հայտնում պարոն Ֆ. Ջուլիան Լանթրիին և պարոն Ալեքս Լյուին Առողջապահության ոլորտում հետազոտությունների գլոբալ նախաձեռնության (Global Health Engagement Research Initiative) շրջանակում տրամադրված այս մրցանակին աջակցելու համար:

Տեղեկատվությունը և եզրակացություններն անպայմանորեն չեն ներկայացնում հեղինակ հաստատությունների տեսակետները: Ջեկույցի, ներառյալ ցանկացած սխալի կամ բացթողման համար պատասխանատու է զեկույցը կազմող հիմնական թիմը:

Առաջարկվող մեջբերում՝ Բրինը Ռ.Վ.Բ, Ղազարյան Ա, Պարոնյան Լ., Գևորգյան Կ., Շչերբակով Օ., Գևորգյան Հ., և Օլիվալ Բ.Ջ. 2023: Մեկ առողջությունը Հայաստանում Մեկ առողջության գործառնությունների և կարողությունների գնահատում. «EcoHealth» դաշինք: <https://doi.org/10.5281/zenodo.10094793>

Հեղինակային իրավունքները պաշտպանված են՝ «EcoHealth» դաշինք, 2023 թ. :



EcoHealth Alliance



ԵՐԵՎԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ՀՀ ԱՆ ՀԻՎԱՆԴՈՒՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՐԱՆՍԿԱՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ



1 Բովանդակություն

1	ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	4
2	ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	6
3	ԱՄՓՈՓՈՒՄ	8
4	ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	15
5	ԱՅՍ ԶԵԿՈՒՅՅԻ ՆՊԱՏԱԿԸ	17
6	ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	17
6.1	Գրականության ուսումնասիրություն	19
6.2	«Մեկ առողջությանը» նվիրված բազմուրրտ վիրտուալ աշխատաժողով	20
6.3	Հարավային Կովկասի տարածաշրջանային հանդիպում՝ նվիրված «Մեկ առողջության» շրջանակում կենսահսկողության և կենսապաշտպանության հարցերին.....	20
7	«ՄԵԿ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ» ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ	21
8	«ՄԵԿ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ» ՈԼՈՐՏՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	24
9	ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ «ՄԵԿ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ» ՄԵՋ	29
10	ԿԵՆՍԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ «ՄԵԿ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ»	33
10.1	Ընդհանուր ակնարկ.....	33
10.2	Կենսապաշտպանությունը և «Մեկ առողջությունը» Հայաստանում	34
11	ՌԻՍԿԵՐԻ ԿՐՃԱՏՈՒՄ ԵՎ ՌԻՍԿԵՐԻ ՊՐՈՖԻԼԱՎՈՐՈՒՄ	38
11.1	ՆՈՐ ԱՌԱՋԱՑՈՂ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (EID) ՌԻՍԿԵՐԻ ՊՐՈՖԻԼԱՎՈՐՈՒՄ.....	39
11.2	ՆՈՐ ԱՌԱՋԱՑՈՂ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ԹԵԺ ԿԵՏԵՐԻ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ	43
11.2.1	<i>Հողօդատարածման փոփոխություն</i>	<i>46</i>
11.2.2	<i>Մարդու ներգործության ինդեքս</i>	<i>47</i>
11.2.3	<i>Գյուղատնտեսական կենդանիների խտություն.....</i>	<i>49</i>
12	ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	51
13	«ՄԵԿ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ» ԿԻՐԱՌՈՒՄԸ ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒՄ	59
13.1	Գործող ազգային ենթակառուցվածքները, հնարավորությունները, գործիքները և ռեսուրսները՝ «Մեկ առողջության» շրջանակում տարբեր ոլորտներում և ճյուղերում համագործակցության համար.....	59
13.1.1	<i>Ընդհանուր մարտահրավեր՝ «Մեկ առողջության» գործարկման և ֆինանսավորման համար.....</i>	<i>65</i>
13.2	«Մեկ առողջության» բազմաուրրտ համակարգման մեխանիզմ(ներ)	67
13.3	Միջոլորտային համակարգեր հիվանդությունների մասին հաղորդման և տվյալների փոխանակման համար	72

13.3.1	<i>Լաբորատոր տվյալների փոխանակում</i>	75
13.3.2	<i>Տարածաշրջանային համագործակցություն կենսահսկողության և տվյալների փոխանակման համար</i>	78
13.4	Առաջնահերթությունների համատեղ սահմանում և պատրաստվածության պլանավորում, ներառյալ հիվանդությունների վրա ազդող գործոնների և հիվանդությունների աշխարհագրական թեժ կետերի հայտնաբերումը.....	79
13.5	Ռիսկերի արդյունավետ և համակարգված հաղորդում	82
13.6	«Մեկ առողջության» շրջանակում աշխատուժի զարգացում.....	86
13.6.1	<i>Դաշտային համաճարակաբանության և լաբորատոր ուսուցման ծրագրեր</i>	91
13.7	Մշտադիտարկումը, գնահատումը և «Մեկ առողջության» շրջանակում կատարվող գործողությունների մասին հաղորդումը.....	92
14	ԴԵՊՔԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ «ՄԵԿ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ» ՇՐՋԱՆԱԿՈՒՄ	95
14.1	Բազմալորտ մոտեցման կիրառում ընդերային լեյժմանիոզի դեմ պայքարում .	95
15	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ՀԵՏԱԳԱ ՔԱՅԼԵՐԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ «ՄԵԿ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ» ՆԵՐԴՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ.....	97
16	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	102
17	ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	103
18	ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՀՈԴՎԱԾՆԵՐ ԵՎ ԶԵԿՈՒՅՑՆԵՐ՝ ԿԱՊՎԱԾ «ՄԵԿ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ» ՀԵՏ.....	106
18.1	«Մեկ առողջություն»	106
18.2	Զոռնոզ հիվանդություններ.....	107
18.3	Շրջակա միջավայր.....	108
18.4	Կենսաբազմազանություն և պահպանում	108
18.5	Կենսապաշտպանություն	108
19	ՀԱՎԵԼՎԱԾ՝ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԻՐՏՈՒԱԼ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎՆԵՐԻՑ	109
19.1	Վիրտուալ աշխատաժողովի մասնակիցները	109
19.2	Տարածաշրջանային հանդիպման մասնակիցները	109
19.3	Գործողություն – «Մեկ առողջության» կիրառումը գործնականում.....	110
19.4	Գործողություն – Նոր առաջացող վարակիչ հիվանդությունների (EID) ռիսկերի պրոֆիլի ստեղծում.....	112
19.5	Գործողություն – Զոռնոզ հիվանդությունների քննարկում սեղանի շուրջ	115
19.5.1	<i>Նախնական սցենար</i>	116
19.5.2	<i>Սցենարի թարմացում #1</i>	118
19.5.3	<i>Գործողությունների և համակարգման աղյուսակ (օրինակ)</i>	120
19.5.4	<i>Սցենարի թարմացում #2</i>	122
19.5.5	<i>Սցենարի թարմացում #3</i>	124
19.5.6	<i>Սցենարի թարմացում #4</i>	126

2 ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

AAU	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
AMR	Հակամարեային կայունություն
ASF	Խոզերի աֆրիկյան ժանտախտ
BNSR	Մետաքսի ճանապարհի կենսահսկողության ցանց
CBD	Կենսաբազմազանության մասին կոնվենցիա
CCHF	Ղրիմ-Կոնգոյի հեմոռագիկ տենդ
COVID-19	Կորոնավիրուսային հիվանդություն 2019
DMS	Պաշտպանություն, ռազմական ոլորտ, անվտանգություն
DTRA	ԱՄՆ Պաշտպանության դեպարտամենտի՝ սպառնալիքների նվազեցման գործակալություն
EHA	EcoHealth դաշինք
EID	Նոր վարակիչ հիվանդություն
EIDSS	Հիվանդությունների համալիր էլեկտրոնային դիտարկման համակարգ
EPIS	Համաճարակների հետախուզման տեղեկատվական համակարգ
EU	Եվրոպական Միություն
FETP	Դաշտային համաճարակաբանության վերապատրաստման ծրագիր
FSIB	Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին
GIS	Աշխարհագրական տեղեկատվական համակարգ
HFI	Մարդու ներգործության ինդեքս
HLIB	Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին
HPAI	Բարձր ախտածին թռչնագրիպ
IHR	Միջազգային առողջապահական կանոններ
IHISA	Հայաստանի առողջապահության ոլորտում միասնական տեղեկատվական համակարգ
JEE	Համատեղ արտաքին գնահատում
JRA	Ռիսկերի համատեղ գնահատում
MCM	«Մեկ առողջության» բազմոլորտ համակարգման գնահատում
MOH	Առողջապահության նախարարություն
MOU	Փոխըմբռնման հուշագիր
NAPHS	Առողջապահության անվտանգության բնագավառում գործողությունների ազգային ծրագիր
ԳԱԱ (NAS)	Գիտությունների ազգային ակադեմիա

NBSAP	Կենսաբազմազանության ազգային ռազմավարություն և գործողությունների ծրագիր
ՀՎԿԱԿ (NCDC)	Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն
ՀԿ (NGO)	Հասարակական Կազմակերպություն
VCNA	Վարակիչ հիվանդությունների փոխանցողների դեմ պայքարի ազգային կարիքների գնահատում
OHHLEP	«Մեկ առողջության»՝ բարձր մակարդակի փորձագիտական խումբ
OHZDP	Զոռնոգ հիվանդությունների առաջնահերթությունը «Մեկ առողջության» շրջանակում
SARS-CoV-2	Ծանր սուր շնչառական համախտանիշի վիրուս 2
SC-FELTP	Հարավային Կովկասի դաշտային համաճարակաբանության և լաբորատոր ուսուցման ծրագիր
SNCO	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
SOP	Գործողությունների ստանդարտ ընթացակարգ
STAR	Ռիսկերի գնահատման ռազմավարական գործիքակազմ
PPE	Անհատական պաշտպանության միջոցներ
PVS	Անասնաբուժական ծառայությունների աշխատանք
ՀՀ (RA)	Հայաստանի Հանրապետություն
RVSPCLS	Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն
ՊՈԱԿ (SNCO)	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
TTX	Վարժություն՝ քննարկումներ սեղանի շուրջ
USAID	Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալություն
USD	ԱՄՆ դոլար
ԸԼ (VL)	Ընդերային լեյշմանիոզ
WAB-Net	Արևմտյան Ասիայի չղջիկների հետազոտման ցանց
ԱՀԿ (WHO)	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
ԿԱՀԿ (WOAH)	Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպություն (նախկինում՝ OIE)
ԵՊԲՀ	Երևանի պետական բժշկական համալսարան
ԵՊՀ	Երևանի պետական համալսարան

3 ԱՄՓՈՓՈՒՄ

«Մեկ առողջություն» հայեցակարգի նպատակն է օպտիմալացնել մարդկանց, կենդանիների և էկոհամակարգերի հավաքական առողջությունը: Այս ամբողջական մոտեցումը կարող է օգնել ամրապնդելու առողջապահական անվտանգությունը երկրների ներսում և երկրների միջև, այդ թվում՝ նպաստելու առողջությանը սպառնացող վտանգների ավելի արդյունավետ կանխատեսմանը, հայտնաբերմանը, արձագանքմանը և վերականգողական աշխատանքին: Ճանաչելով մարդկանց, ընտանի և վայրի կենդանիների, բույսերի և էկոհամակարգերի փոխկապվածությունը՝ բազմաթիվ, հաճախ մեկուսացված ոլորտները կարող են տեղավորվել ընդհանուր հարթակում: Առողջությանը սպառնացող վտանգները, որոնք հատում են մարդ-կենդանի-բնապահպանական միջերեսը, գնալով ավելի են տարածվում, քանի որ վերջին 50 տարիների ընթացքում հայտնաբերված մարդկային ախտածինների մեծ մասը գոռնոզ են (այսինքն՝ կենդանական ծագման) և կապված են վայրի բնության վարակակիր օրգանիզմների հետ: Նոր հիվանդության (օրինակ՝ SARS-CoV-2) առաջացման հարցն արդյունավետ կերպով լուծելու և, միաժամանակ, էնդեմիկ հիվանդությունները կառավարելու համար պետք է

որդեգրվի «Մեկ առողջություն» բազմոլորտ մոտեցումը:

Հայաստանը նկատելի առաջընթաց է գրանցել՝ իր ազգային կենսանվտանգության և կենսապահովության ջանքերում ներառելով «Մեկ առողջություն» մոտեցումը, սակայն դեռ կան հնարավորություններ՝ խթանելու այդ ջանքերը միջոլորտային հաղորդակցության, պլանավորման, հսկողության և կարողությունների զարգացման միջոցով: Սույն զեկույցը հիմնված է հանրային տիրույթում առկա գրական տվյալների, փաստաթղթերի, հաշվետվությունների, ինտերակտիվ երկօրյա աշխատաժողովի և Վրաստանի Թբիլիսի քաղաքում տեղի ունեցած «Մեկ առողջությունը Հայաստանում» ծրագրի շահառուների հետ եռօրյա տարածաշրջանային հանդիպման վրա: Չեկույցում ներկայացվում են առկա հնարավորությունները և առաջարկներ՝ «Մեկ առողջություն» հայեցակարգն առողջության հետ կապված մշտական գործողություններում ինտեգրման հետ:

Հայաստանում մարդկանց, կենդանիների և շրջակա միջավայրի առողջության պահպանման համար պատասխանատու առաջնային գերատեսչություններն են Առողջապահության

նախարարությունը, Էկոնոմիկայի նախարարությունը (պատասխանատու է գյուղատնտեսության և անասնաբուժական ծառայությունների համար), Շրջակա միջավայրի նախարարությունը և Մանուկների անվտանգության տեսչական մարմինը: Մյուս ոլորտները, ներառյալ ակադեմիական, անվտանգային և ազգային գիտական ոլորտի ներկայացուցիչները նույնպես իրականացնում են «Մեկ առողջություն» մոտեցման հետազոտություն և սահմանում են կենսաանվտանգության և անվտանգության առաջնահերթությունները և քաղաքականությունը: Այս ոլորտները հիմնականում անկախ գործունեություն են ծավալել, բայց քանի որ Հայաստանը համեմատաբար փոքր երկիր է, տարբեր ոլորտների միջև կա ոչ ֆորմալ հաղորդակցություն նույնիսկ այն դեպքում, երբ պաշտոնական համագործակցային միջոցները օպտիմալ կերպով չեն գործում: Չնայած այս անկախությանը, յուրաքանչյուր սեկտոր իրականացրել է առողջապահության ոլորտի մի քանի հնարավորությունների գնահատումներ, մշակել է ազգային պլաններ, ընդունել համապատասխան օրենքներ և կանոնակարգեր և իրականացրել կենսահսկողության հետազոտական ծրագրեր իրենց իսկ ոլորտում

(Աղյուսակ 1): Հայաստանը, այնուամենայնիվ, դեռևս ավարտին չի հասցրել «Առողջապահության անվտանգության բնագավառում գործողությունների ազգային ծրագիրը»: Կան նաև մշակման փուլում գտնվող մի քանի այլ ծրագրեր և գնահատումներ, որոնք դեռ պետք է ավարտին հասցվեն կամ թարմացվեն:

Պատմականորեն երկիրը միշտ չէ, որ հետևել կամ կատարել է նախկինում իրականացված առողջության գնահատումներից բխած առաջարկությունները մի շարք , այդ թվում ֆինանսական և մարդկային ռեսուրսների կարողությունների սահմանափակ լինելու պատճառներով: Ավելին, գնահատման արդյունքների հաղորդակցումը և տարածումը կարելի էր ավելի մատչելի դարձնել այլ գերատեսչություններում կամ ոլորտներում առկա «Մեկ առողջություն» մոտեցման շահագրգիռ կողմերի համար: Հնարավորությունների գնահատման արդյունքում ներկայացված առաջարկություններին հետևելն ու «Առողջապահության անվտանգության բնագավառում գործողությունների ազգային ծրագիրը» (NAPHS) ավարտին հասցնելը կհանգեցնի ավելի ծախսարդյունավետ մոտեցումների, քանի որ Հայաստանը շարունակում է առաջնորդվել առողջապահական սպառնալիքների կանխարգելման սկզբունքով՝ արձագանքման միջոցառումների վրա հիմնվելու փոխարեն:

Աղյուսակ 1. Իրականացված գնահատումներ և ծրագրեր

Ծրագիր կամ գնահատման	Ավարտված?
Համատեղ արտաքին գնահատում (JEE)	Այո (2016, 2023)
Անասնաբուժական ծառայությունների կատարման գնահատում (PVS Evaluation)	Այո (2007)
Անասնաբուժական ծառայությունների կատարման գնահատման հետագա աշխատանքներ (PVS Evaluation Follow-Up)	Այո (2018)
Անասնաբուժական ծառայությունների կատարման բացթողումների վերլուծություն (PVS Gap Analysis)	Այո (2009)
Անասնաբուժական ծառայությունների կատարման հետ կապված օրենսդրություն (PVS Legislation)	Ոչ
Միջազգային առողջապահական կանոններ - Անասնաբուժական ծառայությունների կատարում աշխատաժողով (IHR-PVS Bridging Workshop)	Այո (2019)
Առողջապահության անվտանգության բնագավառում գործողությունների ազգային ծրագիր (NAPHS)	Ոչ
Ռիսկերի գնահատման ռազմավարական գործիք (STAR)	Այո (2019, 2022, 2023)
Զոռնոգ հիվանդությունների առաջնահերթությունը «Մեկ առողջություն» մոտեցման մեջ (OHZDP)	Ոչ
Հակամանրէային կայունության ազգային գործողությունների ծրագիր	Այո (2015)
Ազգային կենսաբազմազանության ռազմավարություն և գործողությունների ծրագիր (NBSAP)	Ոչ
Համատեղ ռիսկերի գնահատում (JRA)	Ոչ

Ինչ վերաբերում է կենսահսկողությանը, Հայաստանում օրենքով պահանջվում է ծանուցել վարակիչ հիվանդությունների այդ թվում՝ բազմաթիվ զոռնոգ հիվանդությունների մեծամասնության մասին: Կառավարության հիմնական գործիքը, որն օգտագործվում է իրական ժամանակում առողջապահության բնագավառի տեղեկատվության փոխանակման

համար, «Հիվանդությունների համալիր էլեկտրոնային դիտարկման համակարգ» (EIDSS) է: Ե՛վ Առողջապահության նախարարությունը (ԱՆ), և՛ էկոնոմիկայի (նախկինում Գյուղատնտեսության), և՛ Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը տվյալները ներմուծում են EIDSS, որտեղ պահվում են համաճարակաբանական, անասնաբուժական և փոխանցողների

դիտարկման տվյալները և հասանելի են երկու նախարարությունների շահագրգիռ կողմերին: Թեև ավելի քան 170 վարակիչ հիվանդություններ ենթակա են ծանուցման, Առողջապահության և Գյուղատնտեսության (այժմ՝ Էկոնոմիկայի) նախարարությունները 2014 թվականին հրապարակել են համատեղ հրաման, որտեղ թվարկվում են հանրային առողջությանը սպառնացող առաջնահերթ զոոնոզ հիվանդությունները, այդ թվում՝ սիբիրյան խոցը, թռչնագրիպը, կատաղությունը և հինգ այլ հիվանդություններ: Ներկայում համատեղ հրամանները չեն գործում և փոփոխությունների փուլում են: Առողջապահության և Էկոնոմիկայի նախարարությունները համագործակցում են նաև հիվանդությունների բռնկումների հետազոտությունների հարցում: Այդ հետազոտությունները սովորաբար իրականացվում են տարբեր մասնագիտությունների տեր անձանց խմբերի կողմից: Մարդու առողջության ոլորտից դուրս հսկողության համակարգերի մշակումն, այնուամենայնիվ, հետ է մնում: Շրջակա միջավայրի նախարարությունը ներկայումս աննշան դեր է խաղում «Մեկ առողջության» մոտեցման կիրառմանն ուղղված գործողություններում: Շրջակա միջավայրի առողջության և վայրի բնության հարցերով զբաղվող լրացուցիչ շահագրգիռ կողմերին

կենսահսկողության մեջ ներգրավումը կարող է նպաստել հիվանդությունների առաջացման էկոլոգիական գործոնների մասին ավելի լավ պատկերացում ձեռք բերելուն, և կօգնի հետագա հետազոտություններին և զոոնոզ հիվանդությունների տարածման ռիսկերի գնահատմանը:

Չնայած միջոլորտային համագործակցության և տվյալների փոխանակման գործընթացի բարելավմանը, այդ թվում՝ EIDSS-ի ներդրմանը, չկա առողջապահական մեկ ազգային մարմին կամ համակարգող մեխանիզմ, որը պաշտոնապես կկազմակերպի տարբեր ոլորտների աշխատանքը: Երկու ամենամոտ օրինակներն են «կենսանվտանգության և կենսապահովության միջգերատեսչական աշխատանքային խումբը» և «Միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոնների (IHR) կիրառման հարցերով, վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի, համընդհանուր լաբորատոր ցանցի գործողությունները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով» (այն 2022 թվականին թարմացվել՝ կապված 2021-2022 թվականներին կառավարության կառուցվածքի փոփոխության հետ): Ի հավելումն Հայաստանի լաբորատոր ցանցի կառավարմանը, վերոնշյալ համակարգող հանձնաժողովը նաև զբաղվում է զոոնոզ հիվանդությունների հսկողության

հարցերի համակարգմամբ, ընդունում է «Մեկ առողջություն» մոտեցումը և ունի հավասարակշռված մասնակցություն մի շարք ոլորտներից, այդ թվում՝ առողջապահության, շրջակա միջավայրի պաշտպանության, անվտանգային և ակադեմիական ոլորտներից:

«Կենսասանվտանգության և կենսապահպանության և միջգերատեսչական աշխատանքային խումբը» բազմոլորտ խումբ է, որը ղեկավարվում է Անվտանգության խորհրդի կողմից և ստեղծվել է կենսասանվտանգության նոր կանոնակարգերի մշակման համար: Անվտանգության ոլորտի, ինչպես նաև հանրային առողջության ոլորտի և անասնաբուժության մասնագետների ներգրավվածությունը կենսասանվտանգության հարցերում ցույց է տալիս, թե ինչպես կարող են տարբեր ոլորտները տեղավորվել «Մեկ Առողջություն» մոտեցման միասնական հարթակում: Այս ոլորտների միջև շարունակական համագործակցությունը կարող է օգնել ապագայում մեկ առողջապահական ազգային կոմիտեի ձևավորմանը:

Համեմատած աշխարհի այլ մասերի հետ՝ Հայաստանը և Կովկասի տարածաշրջանը չեն համարվում վարակիչ հիվանդությունների

առաջացման թեժ կետեր, սակայն լանդշաֆտներում մարդու կողմից իրականացվող փոփոխությունները կարող են մեծացնել զոոնոզ վարակների տարածման հավանականությունը: Հայաստանում զոոնոզ հիվանդությունների առաջացման և տարածման գործոններից են գյուղատնտեսության համար հողերի փոխարկումը, չկարգավորված էկոտուրիզմը (հատկապես դեպի քարանձավներ), կենսասանվտանգության ոչ պատշաճ միջոցառումները որոշ մանր ֆերմերների շրջանում, արոտավայրերում անասունների արածելը և վայրի բնության հետ շփվելը, կենդանիների տեղաշարժը միգրացիոն ուղիներով, անասնաբույժների շրջանում հակաբիոտիկների օգտագործման կանոնակարգման բացակայությունը (հակամանրէային կայունության) և վայրի բնության սահմանափակ վերահսկողությունը:

Եվ, վերջապես, հիմնվելով գրականության ուսումնասիրության, երկօրյա աշխատաժողովի և եռօրյա տարածաշրջանային հանդիպման արդյունքների վրա՝ առաջարկվում են հետևյալ գործողությունները՝ Հայաստանում «Մեկ առողջություն» մոտեցման հնարավորությունների ամրապնդման համար (Աղյուսակ 2).

Աղյուսակ 2. Առաջարկվող գործողություններ Հայաստանում «Մեկ առողջություն» մոտեցման առաջխաղացման համար

Առաջարկություններ	
<i>Համակարգում և կառավարում</i>	Պաշտոնապես ստեղծել «Մեկ առողջություն» հայեցակարգի ազգային կոմիտե, որը կներառի ներկայացուցիչներ Առողջապահության նախարարության, Շրջակա միջավայրի նախարարության, Էկոնոմիկայի նախարարության (ներառյալ գյուղատնտեսության), Ազգային անվտանգության խորհրդի, Մանուկների անվտանգության տեսչական մարմնի, Շրջակա միջավայրի պաշտպանության և հանքարդյունաբերության տեսչական մարմնի, Գիտությունների ազգային ակադեմիայի, համալսարանների և «Մեկ առողջություն» մոտեցման այլ շահագրգիռ կողմերի:
	Վերջնական տեսքի բերել, թարմացնել և իրագործել դեռևս չիրականացված ազգային ծրագրերն ու գնահատումները, ներառյալ Առողջապահության անվտանգության ազգային գործողությունների ծրագիրը, Ազգային կենսաբազմազանության ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը և կառավարության փորձագետների բազմոլորտ խմբի հետ ռիսկերի համատեղ գնահատումը:
<i>Հիվանդությունների ռիսկի նվազեցում</i>	Ընդլայնել գոռնոգ հիվանդությունների մշտադիտարկումը և հսկողությունը վայրի բնության մեջ՝ օգտագործելով ոչ մահաբեր մեթոդները:
	Ընդլայնել հանրային հաղորդակցությունը կենսաբազմազանության պահպանման կարևորության մասին և անվտանգ գործելակերպ՝ վայրի բնության հետ փոխազդեցություններում
	Ռսիկի խմբերի շրջանում իրականացնել նպատակային միջոցառումներ, ներառյալ պատվաստումներ
<i>«Մեկ առողջություն» մոտեցման հնարավորությունների զարգացում</i>	Վերանայել գոռնոգ հիվանդությունների հաշվառման և հաշվետվողականության համակարգը, ներգրավելով ընտանի կենդանիներ ունեցող անհատ տնտեսավարողներին և ֆերմերներին
	Բարելավել առողջության հետ կապված տեղեկատվության տարածման թափանցիկությունն ու համոզվել, որ տեղեկատվությունը ժամանակին է հասնում լրացուցիչ ոլորտներին, վարչություններին և ակադեմիական շրջանակին
	Ընդլայնել համատեղ աշխատանքային վերապատրաստումը անասնաբույժների, շրջակա միջավայրի առողջության մասնագետների, համաճարակաբանների և այլ մասնագետների հետ մարդ-կենդանի-բնապահպանական առողջության շրջանակում:
	Մշակել համատեղ շարունակական վերապատրաստումների պարտադիր ծրագիր, որտեղ ներգրավված կլինեն բոլոր շահագրգիռ ոլորտների ներկայացուցիչները:
	Մշակել դեպքերի համատեղ քննարկումներ: Իրականացնել համատեղ վարժանքներ՝ բոլոր շահագրգիռ ոլորտների ներկայացուցիչների ներգրավվածությամբ, ներառյալ տարբեր մակարդակները ըստ իրենց պարտականությունների և պատասխանատվությունների:

Ընդհանուր առմամբ, Հայաստանը, հատկապես վերջին տասնամյակում, զգալի աճ է գրանցել մարդկանց և կենդանիների առողջության հսկողության հնարավորությունների, աշխատուժի և ենթակառուցվածքների զարգացման առումով: «Մեկ Առողջություն» մոտեցման հետագա ներդրումը, մասնավորապես՝ շրջակա միջավայրի առողջության և վայրի բնության ոլորտները «Մեկ

առողջություն» մոտեցման շրջանակում ծավալվող գործունեության մեջ ավելի լավ ինտեգրման միջոցով կարելի է նպաստել Հայաստանում մարդկենդանի-շրջակա միջավայր հարթակում աշխատող հաստատությունների և անձանց համակարգմանն ու արդյունավետությանը:



4 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) համավարակը գլխավայր շրջել է մեր առօրյա կյանքը և լույս է սփռել նոր վարակիչ հիվանդությունների առաջացման ռիսկերի և մեր առողջապահական համակարգերի խոցելիության վրա: Բոլոր գիտական ապացույցները փաստում են, որ, ինչպես անցյալի համավարակներից շատերը, այնպես էլ ծանր ընթացքով սուր շնչառական վարակ 2-ը (SARS-CoV-2) հավանաբար առաջացել է կենդանուց և փոխանցվել է մարդկանց¹⁻⁴: Գլոբալ առումով վերջին 50 տարիների ընթացքում ճանաչված մարդկային ախտածինների մեծ մասը զոռնոզ է (60%), իսկ նոր առաջացած զոռնոզ հիվանդությունների մեծամասնությունը (>70%) կապված է վայրի բնության վարակակիր օրգանիզմների հետ⁵: Մա ընդգծում է զոռնոզ (այսինքն՝ կենդանական ծագման) հիվանդությունների և առողջությանը սպառնացող ընդանուր վտանգների դեմ ուղղված բազմամասնագիտական մոտեցումների անհրաժեշտությունը: Կենդանական աշխարհից զոռնոզ ախտածիններն ի հայտ են գալիս կա՛մ ուղղակի եղանակով՝ մարդ-կենդանի սերտ շփման միջոցով, կա՛մ անուղղակի ճանապարհով՝ վարակակիր գյուղատնտեսական կենդանիների միջոցով, որոնք հանդես են գալիս որպես «ամպլիֆիկանոզ միջոցներ», կա՛մ հողվածոտանի փոխանցողների կամ շրջակա

միջավայրի ազդեցության միջոցով: Նոր զոռնոզ հիվանդությունների առաջացումը կանխելու ջանքերն ուղղված են այս բարձր ռիսկայնության շփման տարածքներին, սակայն արդյունավետություն ապահովելու համար պահանջվում է բարձր ֆունկցիոնալությամբ, բազմառոտ «Մեկ առողջություն» մոտեցում՝ ռիսկերը նվազեցնելու, հիվանդությունների արագ հայտնաբերումը պարզեցնելու և ճգնաժամային իրավիճակներին արձագանքելու համար՝ այդպիսով նվազեցնելով դրանց ազդեցությունը⁶⁻⁸:

Նոր հիվանդությունների առաջացման այս վտանգը տարբերվում է ըստ աշխարհագրության, սակայն այն կարող է կանխատեսելի լինել, քանի որ կենդանիների որոշ խմբեր և շրջակա միջավայրի գործոններ ավելի մեծ վտանգ են ներկայացնում մարդու առողջության համար^{5, 9, 10}: Գործոնները, որոնք նպաստում են վիրուսի փոխանցմանը կենդանիներից մարդկանց, ներառում են՝ լանդշաֆտների էկոլոգիական փոփոխություններ, գյուղատնտեսական գործունեության ընդլայնում՝ առանց համապատասխան կենսաանվտանգության ապահովման, կլիմայի փոփոխություն, առևտրի և ճամփորդության աճ և ուրբանիզացիա^{5,9}: Հաշվի առնելով այս

գործոնները, ինչպես նաև այն, որ Հարավային Կովկասի տարածաշրջանում, այդ թվում՝ Հայաստանում, կաթնասունները (մասնավորապես չղջիկները, կրծողները և գիշատիչները) բավականաչափ ուսումնասիրված չեն, տարածաշրջանը կարող է դառնալ վարակիչ հիվանդությունների նոր թեժ կետ: Ավելին, որպես Մերձավոր Արևելքի, Եվրոպայի, Ռուսաստանի և Ասիայի միջև աշխարհագրական խաչմերուկ՝ Հարավային Կովկասը կարևոր տարածաշրջան է գլոբալ անվտանգության և ճանապարհորդության համար, և այս տարածաշրջանում ախտածինների կենսահսկողության բարելավումը կնպաստի հիվանդությունների արագ հայտնաբերմանն և արձագանքմանը:

Որոշ հիվանդությունների, օրինակ՝ սեզոնային գրիպ, սիբիրյան խոց, կատաղություն, ժանտախտ, թոքախտ և հակամանրէային կայունություն, մշտական բեռը, ինչպես նաև զոռնոգ ախտածիններով պայմանավորված հիվանդությունների առաջացման կամ կրկնության վտանգը, ներառյալ հատուկ վտանգավոր ախտածինները, ինչպիսիք են Ղրիմ-Կոնգոյի հեմոռագիկ տենդի վիրուսը (CCHFV), տուլարեմիայի հարուցիչը՝ *Francisella tularensis*-ը և այլն, շարունակում են մարտահրավերներ ներկայացնել առողջապահական համակարգերին և հանրությանը, հատկապես, երբ ռեսուրսները սահմանափակ են նոր բնկումներին արձագանքելու համար

(օրինակ՝ COVID-19): Բացի այդ, քանի որ ինչպես Էնդեմիկ, այնպես էլ նոր առաջացող հիվանդությունների բնկումներ առաջացնող գործոնները լայնորեն տարածված են բնակչության շրջանում, շրջակա միջավայրում և արդյունաբերության մեջ՝ դրանց արդյունավետ կանխարգելումը, հայտնաբերումը և արձագանքումը կարող է չափազանց դժվար լինել: Այս նպատակով պահանջում է համագործակցություն բոլոր մակարդակներում, այսինքն՝ ամբողջ հասարակության ներգրավում, որպեսզի մշակվի և կիրառվի որոշակի քաղաքականություն, իրականացվեն ռիսկերի մշտադիտարկում և ռիսկերի նվազեցմանն ուղղված գործողություններ, համակարգում, ապահովվի հստակ կապ ոլորտների միջև և հասարակության շրջանում ¹¹:

Հետևաբար, նոր հիվանդությունների և Էնդեմիկ հիվանդությունների բեռի հարցն արդյունավետորեն լուծելու համար անհրաժեշտ է որդեգրել «Մեկ առողջություն» համագործակցային մոտեցումը, որը միավորում է տարբեր ոլորտների ռազմավարություններն ու ռեսուրսները և տալիս է տեղեկատվության միջոլորտային փոխանակման, հաղորդակցության, համատեղ հսկողության և արձագանքման հնարավորություն: Հայաստանը մեծ առաջընթաց է գրանցել կենսահսկողության և կենսապաշտպանության հետ կապված գործունեության ընդլայնման ուղղությամբ, սակայն դեռևս կան հնարավորություններ՝

հետագա ներդրումներ անելու և հաջողություն ունենալու «Մեկ

առողջություն» բազմաաղյուսակ մոտեցման շնորհիվ:

5 ԱՅՍ ԶԵԿՈՒՅՑԻ ՆՊԱՏԱԿԸ

Կարևոր է գիտակցել, որ առողջապահության բնագավառում անվտանգության բարձրացման համար «Մեկ առողջություն» մոտեցման կիրառմանը, որպես կանոն, խոչընդոտում է ոլորտային նախարարությունների կողմից որդեգրված «մեկ ոլորտ» մոտեցումը: Այս զեկույցում ներկայացվում են «Մեկ առողջություն» մոտեցման կիրառման օրինակներ և բացատրվում է «Մեկ առողջություն» ընդլայնված մոտեցման ներդրման հնարավորությունը՝ Հայաստանում կենսահսկողության և կենսապաշտպանության հետ կապված գործունեությունն ընդլայնելու համար: Այս զեկույցում ներկայացված տեղեկատվությունը հիմնված է ազգային գնահատումների,

ծրագրերի, աշխատաժողովների և գրականության միջոցով ձեռք բերված արդյունքների վրա՝ առողջությանը սպառնացող վտանգների հետագա պլանավորման, կանխարգելման և արձագանքման համար՝ ապահովելու «Մեկ առողջություն» համապարփակ հայեցակարգը : Մենք նաև ներառում ենք այն տեղեկատվությունն ու հեռանկարները, որոնք ձեռք են բերվել Հայաստանի բազմաթիվ ոլորտների ներկայացուցիչների լայն շրջանակի հետ անցկացված երկօրյա վիրտուալ աշխատաժողովի ընթացքում

6 ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ


Այս զեկույցը մշակվել է գրականության ուսումնասիրության, շահագրգիռ կողմերի քարտեզագրման և կլոր սեղանի շուրջ քննարկումների համակցությամբ՝ հայտնաբերելու այն ոլորտները, որտեղ կա «Մեկ առողջություն» մոտեցման շրջանակում համագործակցության բարելավման անհրաժեշտություն

(Նկար 1): Գործընթացը սկսվեց գրականության ուսումնասիրությամբ, որի միջոցով մշակվեց զեկույցի նախագծի կառուցվածքը: Գրականության ուսումնասիրությունից և նախնական զեկույցի մշակումից հետո 2021 թվականի դեկտեմբերի 2-3-ը տեղի ունեցավ երկօրյա վիրտուալ

աշխատատեղով Հայաստանի կառավարության և ակադեմիական փորձագետների հետ: Աշխատատեղով ընթացքում քննարկվեց «Մեկ առողջություն» մոտեցումը, կենսահսկողության և կենսապաշտպանության ոլորտների գործունեությունը: Աշխատատեղով հյուրերը մասնակցեցին միջոցառումներին և քննարկումներին, որոնց նպատակն էր հասկանալ բացերը և բազմօրոտ համագործակցությունն ընդլայնելու հնարավորությունները: Աշխատատեղովից հետո զեկույցը վերանայվեց և համալրվեց աշխատատեղովի մասնակիցների կողմից, և աշխատատեղովի արդյունքում ներառվեցին լրացուցիչ փաստաթղթեր: Այնուհետև՝ 2022 թվականի դեկտեմբերին, EcoHealth դաշինքը (EHA) կազմակերպեց տարածաշրջանային հանդիպում Հայաստանի, Վրաստանի և

Ադրբեջանի՝ «Մեկ առողջության» շահագրգիռ կողմերի հետ՝ խթանելու պետությունների միջև համագործակցությունը, ինչպես նաև միջոլորտային համագործակցությունը: Հանդիպման ընթացքում բացահայտվեցին լրացուցիչ տեղեկություններ, որոնք ներառվեցին այս զեկույցում: Վերջնական վերանայումից հետո զեկույցը թարգմանվեց հայերեն, և հայերեն ու անգլերեն տարբերակներն առցանց հրատարակվեցին EcoHealth դաշինքի կայքում (<https://www.ecohealthalliance.org>, www.ysu.am): Պատրաստվում է նաև մյուս մասնակիցների կողմից վերանայված՝ ավելի հակիրճ փաստաթուղթ, որն ամփոփում է մեր աշխատատեղովի և գրականության ուսումնասիրության արդյունքում արված հիմնական բացահայտումները:

Նկար 1. Այս զեկույցի մշակման գործընթացը



6.1 Գրականության ուսումնասիրություն

1) Որպես առաջին քայլ՝ կատարվել է անգլերեն լեզվով գրականության համակարգված որոնում Web of Science-ի և PubMed-ի միջոցով: Որոնումը սահմանափակվել է 2010-2021թթ. (հունիս)

Ժամանակահատվածով և ներառել է բոլոր հրապարակումները, որոնք առնչվում են կենսանվտանգությանը, կենսապահովությանը, «Մեկ առողջությանը», զոռնոգ

հիվանդություններին, նոր առաջացող վարակիչ հիվանդություններին կամ հարակից թեմաներին Կովկասի տարածաշրջանում, մասնավորապես՝ Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում: Նախնական

որոնմամբ հայտնաբերվել է 2061 գրառում: Վերնագրերի և

համառոտագրերի վերանայումից հետո դրանց թիվը կրճատվել է, և ձևավորվել է մինչև 208 հոդվածներից կազմված վերջնական խումբ՝ հոդվածների ամբողջական տեքստերի ուսումնասիրության համար: Այս

հոդվածներից 23-ը հատկապես նվիրված են եղել Հայաստանին: Փաստաթղթերի վերջին խումբն ուսումնասիրվել է՝ «Մեկ

առողջության» և կենսանվտանգության/ կենսապահովության

վերաբերյալ հիմնական տեղեկատվության, ինչպես նաև հեղինակների, հաստատությունների և սեկտորների միջև բազմոլորտ

համագործակցության օրինակների առանձնացման համար:

Գրականության

ուսումնասիրությունից ստացված տեղեկատվությունը ներառվել է այս զեկույցում:

2) Հայաստանում «Մեկ առողջությանը» և

կենսանվտանգությանը/կենսապահովությանը վերաբերող փաստաթղթերի՝ հայտնաբերման համար՝

գրականության որոնում է իրականացվել նաև պետական վեբկայքերի, ընդհանուր վեբ որոնման և նախկինում բացահայտված աղբյուրների միջոցով, ներառյալ Առողջապահության

համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ),

Կենդանիների առողջության

համաշխարհային կազմակերպությունը (WOAH,

նախկինում՝ OIE) և Համաշխարհային բանկի կայքերում: Այս

փաստաթղթերի և գործիքների հիմնական տեղեկատվությունը

ներառված է այս զեկույցում: Մասնավորապես, Համաշխարհային

բանկի «Մարդկանց, կենդանիների և շրջակա միջավայրի հանրային

առողջության համակարգերի հզորացման գործառնական շրջանակից»¹² աղապատացվել են և

որպես օրինակներ այս զեկույցում ներառվել են բազմաթիվ աղյուսակներ և նկարներ:

և նկարներ:

3) Վիրտուալ աշխատաժողովից հետո (տե՛ս ստորև) լրացուցիչ գիտական հրապարակումները և

գրականությունը, որոնք փոխանակվել են աշխատաժողովի

մասնակիցների միջև, վերանայվել և ներառվել են այս զեկույցում:

6.2 «Մեկ առողջությանը» նվիրված բազմոլորտ վիրտուալ աշխատաժողով

2021 թվականի դեկտեմբերի 2-3-ը տեղի է ունեցել երկօրյա վիրտուալ աշխատաժողով՝ Առողջապահության նախարարության, Գիտությունների Ազգային Ակադեմիայի (ԳԱԱ), Անվտանգության խորհրդի գրասենյակի, Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) և այլ հաստատությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Մասնակիցները փոքր խմբերով քննարկել են «Մեկ

առողջության», կենսանվտանգության և կենսապահովության պրակտիկայի և քաղաքականության հետ կապված գործողությունները, ինչպես նաև Հայաստանում նոր առաջացող վարակիչ հիվանդությունների ռիսկի գործոնների բացահայտման հարցը: Աշխատաժողովի մասնակիցների ամբողջական ցանկին, օրակարգին և գործողություններին կարող եք ծանոթանալ Հավելվածում:

6.3 Հարավային Կովկասի տարածաշրջանային հանդիպում՝ նվիրված «Մեկ առողջության» շրջանակում կենսահսկողության և կենսապաշտպանության հարցերին

2022 թվականի դեկտեմբերի 6-8-ը Թբիլիսիում կայացել է եռօրյա հանդիպում, որին մասնակցել են 45 մասնակիցներ Հայաստանից, Վրաստանից, Ադրբեջանից և EcoHealth դաշինքից: 20 տարբեր շահագրգիռ կողմեր, այդ թվում՝ Առողջապահության, Շրջակա միջավայրի և Գյուղատնտեսության նախարարություններից, Պետական եկամուտների կոմիտեի ազգային անվտանգության, գիտության և

զբոսաշրջության ոլորտներից, և ոչ պետական կազմակերպությունների (ՀԿ) հանդիպել են կիսվելու Հարավային Կովկասի տարածաշրջանում «Մեկ առողջություն» ծրագրերի և հետազոտությունների իրականացման վերաբերյալ պատկերացումներով և փորձով : Հանդիպումից ստացված որոշ տվյալներ ներառված են այս զեկույցում:




7 «ՄԵԿ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ» ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Վերջերս «Մեկ առողջություն» հասկացությունը ԱՀԿ-ի «Մեկ առողջության»՝ բարձր մակարդակի փորձագիտական խմբի (OHHLEP) կողմից սահմանվել է որպես «ինտեգրված, միավորող մոտեցում, որը նպատակ ունի շարունակաբար հավասարակշռելու և օպտիմալացնելու մարդկանց, կենդանիների և էկոհամակարգերի առողջությունը: Այս մոտեցմամբ մարդկանց, ընտանի և վայրի կենդանիների, բույսերի առողջությունը և, ավելի լայն իմաստով, շրջակա միջավայրը (ներառյալ էկոհամակարգերը) ընդունվում են որպես սերտորեն

կապված և փոխկապակցված (Նկար 2): Մոտեցումը մոբիլիզացնում է բազմաթիվ սեկտորներ, ոլորտներ և համայնքներ հասարակության տարբեր մակարդակներում, որոնք պետք է միասին աշխատեն բարեկեցությունը խթանելու և առողջությանն ու էկոհամակարգերին սպառնացող վտանգներին դիմակայելու համար՝ միևնույն ժամանակ լուծելով մաքուր ջրի, էներգիայի և օդի, անվտանգ և սննդարար սննդի կոլեկտիվ պահանջը, կլիմայի փոփոխության հետ կապված՝ քայլեր ձեռնարկելով և նպաստելով կայուն զարգացմանը¹³:

Նկար 2. «Մեկ առողջություն» մոտեցման վիզուալ պատկերում («Մեկ առողջության»՝ բարձր մակարդակի փորձագիտական խումբ (OHHLEP)):
Տարեկան զեկույց 2021




Չնայած «Մեկ առողջություն» հասկացության ամբողջական սահմանմանը, գործնականում «Մեկ առողջության» գործունեությունը հաճախ ներգրավում է տարբեր ոլորտներ, օրինակ՝ Առողջապահության և Գյուղատնտեսության, ընդ որում, բնապահպանական ոլորտը սովորաբար ավելի քիչ է ներգրավված: Այնուամենայնիվ, ինչպես երևում է Նկար 3-ից, երբ մենք հեռանում ենք «Մեկ առողջության» պարզեցված, տիպիկ մոդելից՝ մոտենալով «Մեկ առողջություն» համապարփակ մոտեցմանը, մի շարք ոլորտներ կարող են համագործակցել և նպաստել ռազմավարություններին,

որոնք խթանում են կենսահսկողության և կենսապաշտպանության հզորացումը: Կարևոր է, որ ոչ բոլոր ոլորտներն են պարտադիր կերպով ներգրավվում «Մեկ առողջության» բոլոր գործողություններում: Կախված սցենարից՝ որևէ ոլորտ կարող է հիմնական կամ ավելի մեծ դեր ունենալ, բայց դա չի նշանակում, որ մյուս ոլորտները չեն կարող նպաստել արձագանքմանն ուղղված քայլերի ավելացմանը: Գամագործակցություն կրթական ոլորտի հետ, հատկապես այն համալսարանների ու մասնագիտությունների, որոնք անմիջապես կապված են Մեկ առողջություն հայեցակարգի հետ՝

բժշկական համալսարան, ագրարային համալսարանի անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուժական ֆակուլտետ, Երևանի պետական համալսարանի կենսաբանական ֆակուլտետի հետ: Ավելին, յուրաքանչյուր ոլորտի կողմից պահանջվող

գործողությունները և դրանց արժեքը հասկանալով՝ կարելի է նպաստել կանխարգելիչ միջոցառումների ծախսարդյունավետության վերլուծություններին, որոնք կանխարգելում են հիվանդությունների բռնկումները:

Նկար 3. «Մեկ առողջության» մոդելների համեմատությունը



8 «ՄԵԿ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ» ՈԼՈՐՏՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ակնկալվում է, որ «Մեկ առողջության» գործունեության և պարտականությունների մեջ ոչ բոլոր ոլորտները հավասարաչափ դեր ունեն, բայց դա չի նշանակում, որ առողջապահության, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի ոլորտներից դուրս գտնվող ոլորտների ներգրավվածությունը պետք է բացառվի: Առողջապահական մարտահրավերների կանխարգելման, հայտնաբերման, արձագանքման և վերականգնմանն ուղղված «Մեկ առողջություն» արդյունավետ մոտեցումը ներառում է լրացուցիչ ոլորտներ, ինչպիսիք են պաշտպանությունը, անվտանգությունը, ակադեմիական ոլորտը, աղետների հետևանքների մեղմացումը և այլ ոլորտներ, որոնք

շահագրգռված են բարելավելու բնակչության առողջությունը տեղական, ազգային, տարածաշրջանային, և համաշխարհային մակարդակներում: Ավելին, պարտականությունների հստակ սահմանազատումը կարևոր է ինչպես ճգնաժամային, այնպես էլ ոչ ճգնաժամային ժամանակաշրջաններում՝ արագ գործողությունների, հաղորդակցության և առաջադրանքների կրկնակի կատարման դեպքերի կրճատման համար: Կոնկրետ ոլորտները, որոնք պոտենցիալ դեր են խաղում Հայաստանում «Մեկ առողջություն» համապարփակ ծրագրերի իրականացման գործում, թվարկված են Աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3. «Մեկ առողջության» պոտենցիալ կարևոր ոլորտները Հայաստանում

Ոլորտ, նախարարություն կամ կազմակերպություն	Ենթանախարարություն կամ վարչություն	«Մեկ առողջության» համապատասխան շրջանակ	Սահմանափակումներ կամ ասպեկտներ, որոնք լրացուցիչ ուշադրության կարիք ունեն
Առողջապահության նախարարություն	<ul style="list-style-type: none"> Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն (NCDC) Չոռնոզ և մակաբուծական հիվանդությունների համաճարակաբանության բաժին 	<ul style="list-style-type: none"> Քաղաքականության մշակում Վարակիչ հիվանդությունների հսկողություն, մշտադիտարկում, բուժում և գնահատում (օրինակ՝ զոռնոզ և մակաբուծային) Փոխանցողների և պահոցների մշտադիտարկում Միջազգային առողջապահական կանոնների (IHR) կիրառում Ջրի անվտանգության և տարբեր վարակիչ հիվանդությունների 	<ul style="list-style-type: none"> Համակարգում գերատեսչությունների և այլ նախարարությունների միջև Անվտանգության կանոնները պատշաճ կերպով պահելու համար հետազոտողները ավելի շատ

	<ul style="list-style-type: none"> • Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն • Ինֆեկցիոն հիվանդանոցներ • Առողջապահության ազգային ինստիտուտ 	<p>դիտարկում, այդ թվում՝ անսովոր և անսպասելի դեպքերի</p> <ul style="list-style-type: none"> • Տվյալների վերլուծություն և հաղորդում • Կենսաանվտանգության վերաբերյալ տեղեկատվության տրամադրում հետազոտողներին, որոնք կատարում են դաշտային աշխատանքներ՝ վարակի ռիսկը նվազեցնելու համար • Հիվանդությունների բռնկումների և դեպքերի մասին հաղորդում նախարարություններին • Ռիսկերի կառավարում • Մասնագետների ուսուցում • Հակամանրէային կայունության կանխարգելում, հսկողություն, մշտադիտարկում, • Բնակչության իրազեկում 	<p>վերապատրաստման կարիք ունեն</p> <ul style="list-style-type: none"> • Դասընթացներ, համագործակցություն և փորձի փոխանակում այլ շահագրգիռ կողմերի և երկրների հետ • Տեղեկատվության կենտրոնացված կառավարում • Կադրերի պակաս • Կարգավորման հետ կապված բացեր
<p>Շրջակա միջավայրի նախարարություն</p>	<ul style="list-style-type: none"> • Կենսառեսուրսների կառավարում • Կլիմայի քաղաքականության բաժին • Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն, պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ) • Հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության քաղաքականության վարչություն 	<ul style="list-style-type: none"> • Բնապահպանական օրենսդրության, կանոնակարգի, քաղաքականության և ուղեցույցների մշակում և կիրառում • Կենսաբազմազանության և հատուկ պահպանվող տարածքների պահպանություն • Բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման խթանում • Վայրի կենդանիների թիրախային տեսակների մշտադիտարկում • Համագործակցություն և տվյալների փոխանակում • Զեկուցում այլ նախարարություններին 	<ul style="list-style-type: none"> • Որոշումներ կայացնողների համար տեղեկատվության ստուգում • Համագործակցություն այլ նախարարությունների, տեղական և միջազգային այլ կազմակերպությունների հետ • Կարգավորումների հետ կապված բացեր • Կենսաանվտանգության կենդանատեսակների մասին տվյալների համալրում

<p>Էկոնոմիկայի նախարարություն և Մանուկների և երիտասարդների տեսչական մարմին</p>	<ul style="list-style-type: none"> • Մանուկների անվտանգության ոլորտում- ռիսկերի վերլուծության և գնահատման ինստիտուտ • Սահմանային վերահսկողության կետերի համակարգման բաժանմունք • Նմուշառման և լաբորատոր փորձաքննության կազմակերպություն (ռեֆերենս լաբորատորիաներ) • Անասնաբուժության և ընտանի կենդանիների վարչություն • Զբոսաշրջության կոմիտե 	<ul style="list-style-type: none"> • Քաղաքականության և օրենսդրության մշակում՝ կապված գյուղատնտեսության, սննդի անվտանգության, անասնաբուժական ստանդարտների և այլնի հետ: • Գյուղատնտեսության ոլորտում մարդկանց հնարավորությունների զարգացում • Վայրի /գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների հսկողություն, ախտորոշում և հաշվետվություն՝ ուղղված մարդկանց և կենդանիների շրջանում տարածված հիվանդությունների կանխարգելմանը • Ֆերմաների կենդանիների պատվաստումների ապահովում • Արձանագրությունների ստեղծում • Մանուկների անվտանգության և կենդանիների հիվանդությունների մշտադիտարկում և վերահսկում • Ներմուծվող և արտահանվող ապրանքների գենետիկական վերահսկողություն • Ռիսկերի գնահատում • Մանուկների և գյուղատնտեսական կենդանիների անվտանգության վերահսկում • Մանուկների անվտանգության խթանում • Հասարակության իրազեկում 	<ul style="list-style-type: none"> • Գենետիկական վերահսկողություն • Կենտրոնացված ցանց • Հիմնադրամ և ենթակառուցվածքներ • Կենտրոնացված տեղեկատվական համակարգ
<p>Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին</p>	<ul style="list-style-type: none"> • Հակահամաճարակային բաժին 	<ul style="list-style-type: none"> • Առողջապահության ոլորտի իրավական ակտերի պահանջների պահպանման ապահովում • Ռիսկերի կառավարում՝ ապահովելու բնակչության սանիտարահամաճարակային անվտանգությունը • Մարդու առողջության անվտանգության վերահսկում • Մասնակցություն քաղաքականության մշակմանը • Տեղական ինքնակառավարման մարմինների իրազեկության բարձրացում • Հաշվետվություն 	<ul style="list-style-type: none"> • Խաչաձև ուսուցում հետազոտական մարմինների միջև • Մասնագետների ուսուցում • Կա օրինագիծ, որը կարգավորելու է կենսաանվտանգության ոլորտը (մշակման փուլում է) • Կարգավորումների հետ կապված բացեր • Անձնական տվյալների փոխանակում • Լայնամասշտաբ շահագրգիռ կողմերի ներգրավում

			իրագրելի և ծրագրերում
Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին		<ul style="list-style-type: none"> Բնապահպանության ոլորտում անվտանգության պահանջների և օրենսդրության համապատասխանության ապահովում Թիրախային տեսակների, շրջակա միջավայրի հսկողություն և ստուգումների իրականացում և այլն 	<ul style="list-style-type: none"> Իրագրելի և համակարգում Հնոցագործման փոփոխություն Մշտադիտարկում
Անվտանգություն	<ul style="list-style-type: none"> Ազգային անվտանգության խորհուրդ Մաքսային և սահմանային ծառայություն Ոստիկանություն 	<ul style="list-style-type: none"> Օգնություն և վերահսկում՝ պոտենցիալ վտանգավոր նմուշները համագործակցող կենտրոններ տեղափոխելիս, որտեղ դրան պետք է ուսումնասիրվեն Քաղաքականության մշակում Կենսահսկողության և կենսաանվտանգության աշխատանքային խմբի համակարգում 	<ul style="list-style-type: none"> Հայաստանում կենսաանվտանգության կարգավորումների համակարգում և վերջնական տեսքի բերում
Գիտական կառույցներ	<ul style="list-style-type: none"> Գիտությունների ազգային ակադեմիա «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ 	<ul style="list-style-type: none"> Լայնածավալ հետազոտական նախագծեր «Մեկ առողջության» շրջանակում Հաշվետվություններ և առաջարկություններ պետական մարմիններին Փորձագիտական եզրակացության տրամադրում պետական մարմիններին Հետազոտությունների արդյունքների հրապարակում և տարածում Լաբորատոր հետազոտություն 	<ul style="list-style-type: none"> Կադրերի ավելացում և նոր մասնագետների ներգրավում Ֆինանսավորում
Համալսարաններ և ակադեմիական ոլորտ	<ul style="list-style-type: none"> Երևանի պետական համալսարան Երևանի պետական բժշկական համալսարան Հայաստանի ազգային համալսարան Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն 	<ul style="list-style-type: none"> Շրջանավարտների ուսուցում (օրինակ՝ անասնաբուժության ոլորտում) Կենսաբազմազանության հետազոտություն, էկոլոգիայի և մակաբույծների հետազոտություն Համագործակցություն Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի (NCDC) հետ Ամենատարվեր թեմաներով (օրինակ՝ կենսաբազմազանություն, էկոլոգիա, մակաբուծաբանություն, 	<ul style="list-style-type: none"> Ոլորտում նոր ուսանողների ներգրավման և նոր մասնագետների պատրաստման անհրաժեշտություն Ավելի շատ հաղորդակցություն որոշում կայացնողների հետ Ախտաճիւնների հետ աշխատանքի

	<ul style="list-style-type: none"> • Լ.Ա.Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտ • Առողջապահության ազգային ինստիտուտ 	<p>վիրուսաբանություն և այլն) հետազոտություններ</p> <p>Կրթություն</p>	<p>սահմանափակում օրենքով</p> <ul style="list-style-type: none"> • Նոր դասընթացներ • Ֆինանսավորում
Այլ նախարարություններ	<ul style="list-style-type: none"> • Ներքին գործերի նախարարություն • Պաշտպանության նախարարություն • Ֆինանսների նախարարություն • Կրթության նախարարություն • Արտաքին գործերի նախարարություն 	<ul style="list-style-type: none"> • Ներգրավում արտակարգ իրավիճակների հսկողության և կառավարման գործում • Դասընթացներ և աշխատաժողովներ • Օգնություն նմուշառման հարցում 	<ul style="list-style-type: none"> • Ավելի շատ հատուկ ուսուցման անհրաժեշտություն
Մասնավոր սեկտոր	<ul style="list-style-type: none"> • Կլինիկաներ • Ախտորոշիչ լաբորատորիաներ • Անասնաբուժական լաբորատորիաներ • WMAR դիլերներ • Էկոտուրիզմով զբաղվող գործակալություններ 	<ul style="list-style-type: none"> • Սննդամթերքի մատակարարման վերահսկողություն և նյութերի և սննդամթերքի հավաստագրում • Հանրային իրազեկվածության բարձրացում 	<ul style="list-style-type: none"> • Իրազեկվածության բարձրացում
<ul style="list-style-type: none"> • Հանքարդյունաբերություն, ներառյալ հանքարդյունաբերության թափոնները • Ջրի գերօգտագործում • Չմաքրված/վատ մաքրված կեղտաջրեր • Ապօրինի/չկարգավորվող անտառահատումներ • Կլիմայի փոփոխություն • Ենթակառուցվածքների զարգացում, ներառյալ հիդրոէլեկտրակայանները, երկաթուղիները, մայրուղիները և ջրագծերը • Սևանա լճում ջրի որակի վատթարացում • Գյուղատնտեսական գործունեություն, ներառյալ գյուղատնտեսական կենդանիների արածեցումը • Վնասատուներ, հիվանդություններ և ինվազիվ տեսակներ • Ապօրինի/չկարգավորվող/վատ կարգավորվող որս և ձկնորսություն • Գերարածեցում, ինչի պատճառով բնական վերականգնման տեմպերը նվազում են 	<ul style="list-style-type: none"> • Սոցիալական և տնտեսական վատ պայմաններ • Ինստիտուցիոնալ հնարավորությունների և առաջնահերթությունների բացակայություն և կոռուպցիա • Էներգիայի մատակարարման և սպառման վատ կառավարում • Հասարակության ոչ բավարար իրազեկվածություն • Բնապահպանության ոլորտից բնապահպանության տվյալների և մշտադիտարկման բացակայություն • Բնապահպանության ոլորտում ներդրումների համար ռեսուրսների սահմանափակ հնարավորություններ • Օրենսդրական բացեր և թափանցիկության բացակայություն • Կառավարության և բնապահպանության ոլորտի այլ դերակատարների միջև թույլ համակարգում

Տեղեկատվություն Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալությունից (USAID)/Հայաստանի արտաքին օգնության մասին ակտից 119 «Կենսաբազմազանության վերլուծությունից»³⁹, Սննդամթերքի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO)/ ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական հանձնաժողովի (UNECE) Կովկասի և Կենտրոնական Ասիայի անտառների վիճակի մասին զեկույցից³⁸, ինչպես նաև Կենսաբազմազանության մասին կոնվենցիային Հայաստանի վեցերորդ ազգային զեկույցից⁴⁰:

Կենսաբազմազանությանը սպառնացող վտանգները և անտառահատումները նշանակալի խնդիրներ են համարվում մասամբ այն պատճառով, որ վարակիչ հիվանդությունների առաջացման և տարածման գործում մեծ դեր են կատարում: Օրինակ՝ Հայաստանի

Հանրապետության տարածքի 95%-ը համարվում է զգայուն առանձնապես վտանգավոր հարուցիչների նկատմամբ⁴⁴: Ծանր հետևանքներ առաջացնող հարուցիչներ կրելու կամ փոխանցելու ռիսկերի հետ ասոցացվող տեսակներն են չղջիկները, կրծողները:

Բնապահպանական քաղաքականության և նախագծերի մշակման ու կառավարման պատասխանատվությունը կրում է Բնապահպանության նախարարությունը, որի կազմում հատկապես կարևոր դեր է խաղում Անտառային քաղաքականության և կենսաբազմազանության վարչությունը: Հայաստանը Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի (ԿԲԿ) և կենսաբազմազանության վերաբերյալ դրա առաջնային քաղաքականությունների և ծրագրի անդամ է: «Կենսաբազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրման և օգտագործման Հայաստանի Հանրապետության ռազմավարությունը և գործողությունների ազգային ծրագիրը (2015թ.)» համահունչ են և հիմնված են

Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի՝ 2010-2020 թթ. ռազմավարական ծրագրով սահմանված նպատակների վրա⁴⁰: Ի լրումն Կենսաբազմազանության մասին կոնվենցիայով նախատեսված պարտավորությունների կատարմանը, Հայաստանի կառավարությունը 2014 թ. -ին ընդունել է «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռաconvention names shoul;dզմավարությունը, պահպանության և օգտագործման պետական ծրագիրը»³⁹: Հայաստանը նաև ստորագրել է պահպանության մի շարք միջազգային համաձայնագրերայդ թվում միգրացիոն տեսակների մասին կոնվենցիան (Ադյուսակ 8):

Ադյուսակ 8. Կենսաբազմազանության կոնվենցիաներ

Երկիր	Ռիոյի կոնվենցիաները				
	UNCBD 1993 Ընդունվել	UNFCCC 1993 Ընդունվել	UNCCD 1997 Վավերացվել		
Հայաստան	Կենսաբազմազանության հետ կապված կոնվենցիաներ				
	CMS 2011 Անդամագրվել	CITES 2008 Միացել	RAMSAR 1993	WHC 1993 Ծանուցվել Իրավահաջորդությա ն մասին	BERN 2008 Վավերացվել

UNCBD = Միավորված ազգերի կազմակերպության Կենսաբանական բազմազանության կոնվենցիա,
 UNFCC = Միավորված ազգերի կազմակերպության կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիա
 UNCCD = ՄԱԿ-ի Կոնվենցիա Անապատացման դեմ պայքարի մասին,
 CMS – Կոնվենցիա Վայրի բնության կենդանիների միգրացիոն տեսակների պահպանման մասին, ,
 Cites = Կոնվենցիա Վայրի ֆաունայի և ֆլորայի վտանգված տեսակների միջազգային առևտրի մասին,

RAMASAR = Կոնվենցիա խոնավ տարածքների մասին ԹՖ Միջազգային կարևորություն, հատկապես որպես ջրային թռչունների ապրելավայր
WHC = Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիա,
BERN = Եվրոպական վայրի բնության և բնական միջավայրերի պահպանման կոնվենցիա

Կենսաբազմազանությունը պահպանելու քաղաքական կամքը կարևոր է, բայց առջևում կան մի քանի մարտահրավերներ:

Կառավարությունն ինտենսիվ գործընթացի մեջ է՝ վերանայելու և թարմացնելու Ազգային Անտառային Քաղաքականությունը և Ռազմավարությունը, որը դեռ ավարտված չէ, բայց նպատակ ունի վերջնական տեսքի բերել մինչև 2023 թվականի վերջը: Լանդշաֆտների վերականգնման ռազմավարության և 2022–2032 թվականների գործողությունների ծրագրի ընդունման և իրականացման անհրաժեշտությունը նույնպես նախկինում առաջարկվել է, բայց դեռ չի իրականացվել՝ որը նույնպես Հայաստանի անտառների և կենսաբազմազանության պահպանման կարևորագույն քայլ է⁴⁵: Ավելին, երբ Հայաստանը մշակում է իր հաջորդ Կենսաբազմազանության ազգային ռազմավարությունը և

գործողությունների ծրագիրը (NBSAP), հնարավորություն է ընձեռվում այն համապատասխանեցնել առողջապահության կարևոր թիրախներին: Ե Քանի որ Կենսաբազմազանության ազգային ռազմավարությունները և գործողությունների ծրագրերը (NBSAP) սովորաբար սահմանում են երկրների էկոհամակարգերի և կենսաբազմազանության կառավարման առաջնահերթություններն ու գործողությունները, նոր ծրագրի մշակումը հնարավորություն է տալիս նպաստելու հիվանդությունների ռիսկերի նվազեցմանը՝ ստեղծելով սիներգիա Հայաստանի Կենսաբազմազանության ազգային ռազմավարությունների և գործողությունների ծրագրերի (NBSAP) և Առողջապահության անվտանգության բնագավառում գործողությունների ազգային ծրագրի միջև:



13 «ՄԵԿ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ» ԿԻՐԱՌՈՒՄԸ ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒՄ

Հետևյալ բաժիններում մենք նախանշում ենք «Մեկ առողջություն» մոտեցումը Հայաստանում գործողության մեջ դնելու կամ «Մեկ առողջություն մոտեցման գործարկման» յոթ կոնկրետ գործընթացներ: «Մեկ առողջություն» բազմաոլորտ մոտեցումը կարող է ունենալ բազմաթիվ ձևեր և կախված է համատեքստից, սակայն այս ընդգրկուն բաղադրիչները, որոնք վերցված են «Մեկ առողջության» նախորդ գնահատումից և գործառնական կառուցվածքից^{12, 27, 41, 42}, առանցքային բաղադրիչներ են «Մեկ առողջության» պատասխան միջոցառումների հաստատման գործում: Դրանք ներառում են.

1. Գործող ազգային ենթակառուցվածքներ, հնարավորություններ, գործիքներ և ռեսուրսներ
2. «Մեկ առողջություն» բազմաոլորտ մոտեցման

3. Կենսահսկողության միջոլորտային համակարգ հիվանդությունների հաղորդման և տվյալների փոխանակման համար
4. Առաջնահերթությունների համատեղ սահմանում և պատրաստվածության համատեղ պլանավորում, ներառյալ հիվանդության ռիսկի գործոնների կամ հիվանդությունների աշխարհագրական թեժ կետերի բացահայտումը
5. Արդյունավետ և համակարգված հաղորդում ռիսկերի մասին
6. «Մեկ առողջության» կադրերի պատրաստում
7. «Մեկ առողջության» գործունեության մշտադիտարկում, գնահատում և հաշվետվություն

13.1 Գործող ազգային ենթակառուցվածքները, հնարավորությունները, գործիքները և ռեսուրսները՝ «Մեկ առողջության» շրջանակում տարբեր ոլորտներում և ճյուղերում համագործակցության համար

«Մեկ առողջության» գործարկումը, նախ և առաջ, պահանջում է գոյություն ունեցող ազգային լանդշաֆտի մանրակրկիտ պատկերացում, ներառյալ քաղաքականությունները, գնահատումները, պլանները, ֆինանսավորումը, ծրագրերի

իրականացումը, տվյալների փոխանակման և հաղորդման համակարգերը և փորձագիտական ցանցերը: Այս տարրերի արդյունավետ համակարգումը և համաձայնեցումը կարևոր է, բայց դա հաճախ մեծ մարտահրավեր է: Դրանց

ցուցակագրումը, լինի դա գլոբալ, տարածաշրջանային, ազգային կամ ենթազգային մակարդակով, կարող է օգնել համակարգի տարբեր մուտքային կետերում սիներգիայի հնարավոր ուղիներ ապահովելուն: Օրինակ՝ համակարգված համակարգում կարգավորող շրջանակները կհաղորդեն պետական կարողությունների գնահատումների մասին, որոնցով պայմանավորված է պլանավորման գործիքների ընտրությունը: Այս գործիքներն այնուհետև ֆինանսավորվում և կիրառվում են համապատասխան ոլորտների համատեղ մասնակցությամբ՝ փորձագիտական ցանցերի և տվյալների, ինչպես նաև

տեղեկատվական համակարգերի աջակցությամբ: Շատ ժամանակ, սակայն, գործողությունների այս հոսքն այնքան էլ գծային չէ, ինչպես նկարագրված է, և տարրերը հաճախ լրացնում են մեկը մյուսին և տվյալներ են հաղորդում միմյանց: Հատկանշական է, որ այս բաղադրիչները կարող են տարբերվել համատեքստից համատեքստ և երկրից երկիր և արտացոլում են ռիսկի գործոնները, կարիքները, ռեսուրսները և կառավարման փոփոխությունները: Այս բաղադրիչների օրինակները հատուկ Հայաստանի համար ներկայացված են ստորև՝ Աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 9. «Մեկ Առողջության» համապատասխան կարգավորող շրջանակներ, գնահատումներ, գործիքներ, ներդրման ռեսուրսներ, տեղեկատվական համակարգեր և փորձագիտական ցանցեր Հայաստանում, դրանց հիմնադրման տարեթիվը/վերջին թարմացումը

<p>Կարգավորող շրջանակներ</p>	<ul style="list-style-type: none"> • Մննդամթերքի անվտանգության մասին օրենք • Կենսանվտանգության և կենսաապահովության օրենք, որը պատրաստ է և ներկայացվել է շահագրգիռ գերատեսչությունների կարծիքին • «Բնակչության բուժօգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության (ՀՀ) օրենքը • «ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքը • ՀՀ ԱՆ 17.12.10 թ. -ի N35-Ն հրամանը՝ «Վարակիչ հիվանդությունների «իրական ժամանակում» էլեկտրոնային համաճարակաբանական հսկողության» • Քիմիական նյութերի հետ կապված համաձայնագրեր • Կենսաբազմազանության մասին կոնվենցիա • Վայրի կենդանիների միգրացիոն տեսակների պահպանման մասին կոնվենցիա
<p>Հնարավորությունների գնահատումներ</p>	<ul style="list-style-type: none"> • Անասնաբուժական ծառայությունների կատարումը (PVS) • Անասնաբուժական ծառայությունների կատարման (PVS) գնահատման հետևողական առաքելություն (2018 թ.) • Անասնաբուժական ծառայությունների կատարման (PVS) բացերի վերլուծության առաքելություն • Միջազգային առողջապահական կանոնների (IHR) հիմնական կարողությունների համատեղ արտաքին գնահատում (2016 թ.) • Հանրային առողջության հիմնական գործողությունների ինքնագնահատում

	<ul style="list-style-type: none"> • Վարակիչ հիվանդությունների փոխանցողների դեմ պայքարի ազգային կարիքների գնահատում (VCNA) • Ռիսկերի ռազմավարական վերլուծություն և պրոֆիլավորում առողջապահական արտակարգ իրավիճակների համար • Հակամանրէային դիմադրողականության (AMR) ինքնագնահատում (2019-2020)
<p>Պլանավորման գործիքներ</p>	<ul style="list-style-type: none"> • Ազգային կամրջող աշխատաժողով Միջազգային առողջապահական կանոնների (IHR) և Անասնաբուժական ծառայությունների կատարման (PVS) վերաբերյալ • Արտակարգ իրավիճակներում հանրային առողջապահական համակարգի պատրաստվածության և արձագանքման պլան • Առողջապահության անվտանգության բնագավառում գործողությունների ազգային ծրագիր (նախաձեռնությունը կա, սակայն դեռ ավարտին հասցված չէ) • Հայաստանի Հանրապետության կենսաբազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման ռազմավարություն և գործողությունների ազգային ծրագիր • Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության և օգտագործման ռազմավարությունը և պետական ծրագիրը • Հակամանրէային կայունության ազգային գործողությունների ծրագիր (2015 թ.)
<p>Ներդրման ռեսուրսներ</p>	<ul style="list-style-type: none"> • ԵՊՀ-ում մակաբույծների/ախտածինների գենետիկական ուսումնասիրությունների լաբորատորիա • Կենդանաբանության ինստիտուտի մոլեկուլային մակաբուծաբանության լաբորատորիա • MediLabSecure-ի անդամ • VectorNet-ի անդամ • Սրբնոյան Ասիայի Չղջիկների հետազոտական ցանցի անդամ (WAB-Net) • Պաշտպանության դեպարտամենտի՝ Մպառնալիքների նվազեցման գործակալության (DTRA) կողմից ֆինանսավորվող մի քանի ծրագրեր մարդկանց և կենդանիների առողջության ոլորտում
<p>Տեղեկատվական և հաղորդման համակարգեր</p>	<ul style="list-style-type: none"> • Հիվանդությունների համալիր էլեկտրոնային հսկողության համակարգ (EIDSS) • Armed ազգային թվային առողջապահական համակարգ (մարդու առողջության և հիվանդանոցների համար) • Հայաստանի առողջապահության ոլորտում միասնական տեղեկատվական համակարգ (IHISA) • WhatsApp VIBER, բջջային օպերատորների կարճ հաղորդագրություններ, սոցիալական ցանցեր, Mulbery • Գիտական հաշվետվությունների ակադեմիական ամսագրեր (օրինակ՝ Առողջապահության և բժշկական գիտությունների հայկական հանդես)
<p>Փորձագիտական ցանցեր</p>	<ul style="list-style-type: none"> • Անվտանգության խորհրդի գրասենյակին կից կենսաանվտանգության և կենսաանվտանգության միջկառավարական աշխատանքային խումբ • Իմունականխարգելման ազգային փորձագիտական խորհրդատվական հանձնաժողով (NITAG) • «Մեկ առողջության» հարցերով միջգերատեսչական աշխատանքային խումբ • ՀՀ պարագիտությունների ասոցիացիա • ԱՆ առընթեր Մարդու և կենդանիների համար ընդհանուր հիվանդությունների փորձագիտական խումբ • Մի քանի ոչ պաշտոնական տեխնիկական աշխատանքային խմբեր

Հայաստանում գործում են մի քանի հիմնական օրենքներ և ինստիտուցիոնալ կառույցներ, որոնք աջակցում են կենսասահկողության և կենսապաշտպանության հնարավորությունների կառավարմանը և ընդլայնմանը: Այդ օրենքներից է սննդամթերքի անվտանգության, քիմիական վտանգների, սանիտարահամաճարակային անվտանգության մասին օրենքը Մշակման փուլում են գտնվում «Հանրային առողջապահության մասին ՀՀ օրենքը»¹¹, բնապահպանական նոր քաղաքականությունը և բնապահպանական համակարգը⁴³, ինչպես նաև կենսանվտանգության և կենսապահպանության նոր օրենքը: Կա նաև ընդգծված քաղաքական կամք՝ աջակցելու Միջազգային առողջապահական կանոնների (IHR) կիրառմանը՝ լայնածավալ ազգային օրենսդրության (>400 իրավական ակտեր) միջոցով, որը վերաբերում է նաև մարդկանց, կենդանիների և շրջակա միջավայրի առողջությանը⁴⁴: Միջազգային առողջապահական կանոնների (IHR) ազգային համակարգողը գտնվում է Առողջապահության նախարարությունում և համակարգում է Միջազգային առողջապահական կանոնների (IHR) կիրառման իրավական և կարգավորիչ շրջանակները⁴⁴: Այնուամենայնիվ, «Մեկ առողջություն» մոտեցման կիրառման հետ կապված՝ կան

ոլորտներ, որտեղ բարելավման կարիք կա, մասնավորապես՝ կապված քաղաքացիական իրավունքի հետ, վայրի կենդանիների նմուշների արտահանման և համալսարաններում տեխնոլոգիաների փոխանցման և կենսանվտանգության ոլորտի հետազոտությունների վերաբերյալ ուղեցույցների հետ: Բացի այդ, Հայաստանում չկա ազգային ջրերի կառավարման մշտական խորհուրդ, իսկ օրենսդրական դաշտը հնանում է, ինչը խոչընդոտել է մաքուր ջրի նախաձեռնությունների շուրջ միջոլորտային համագործակցությանը⁴⁵: Մա կարող է նաև երկիրը խոցելի դարձնել ջրամատակարարման խափանումների դեպքում, այսինքն՝ ջրի միջոցով փոխանցվող ախտածիններով ջրի դիտավորյալ կամ բնական աղտոտման ժամանակ:

Կարողությունների գնահատման և պլանավորման գործիքների առումով Հայաստանը զգալի ջանքեր է գործադրել կենդանիների և մարդկանց առողջության ոլորտներում՝ իրականացնելով «Անասնաբուժական ծառայությունների գնահատման, հետևողական առաքելության և բացերի վերլուծության աշխատանքները», Միջազգային առողջապահական կանոնների (IHR) հիմնական հնարավորությունների համատեղ արտաքին գնահատում, Հանրային առողջապահության

բնագավառի հիմնական գործողությունների ինքնագնահատում և մշակելով Ազգային անվտանգության ռազմավարություն: 2022 թվականին կայացել է զոոնոզների դեմ պայքարի եռակողմ (ներկայում՝ քառակողմ) ուղեցույցի ներդրման գործառնական գործիքի կիրառման աշխատաժողով: Գոյություն ունեն նաև Ստանդարտ գործառնական մի քանի ընթացակարգեր (SOP) զոոնոզ հիվանդությունների բռնկման, խոշոր եղջերավոր անասունների թաղման, արագ արձագանքման խմբի ստեղծման և այլ աշխատանքների համար: Շրջակա միջավայրի առողջության և կենսաբազմազանության հետ կապված՝ կան մի քանի ազգային ծրագրեր, որոնք գործում են ըստ Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի (CBD) (արդեն իսկ քննարկվել է այս զեկույցում): Թեև այս աշխատանքները ցույց են տալիս հստակ նվիրվածություն կենդանիների և մարդկանց առողջության բարելավման հարցին, դրանք միշտ չէ, որ լիարժեք կերպով ներառել են բազմոլորտ շրջանակը: Աշխատանքները հաճախ իրականացվում են բացառապես մեկ նախարարության կամ ոլորտի կողմից կամ առանց այլ նախարարությունների կամ ակադեմիական փորձագետների մասնակցության: Բացի այդ, երբ հետագա շարունակական գնահատումներն իրականացվում են առանց նախորդ գնահատման մեջ

հայտնաբերված բացթողումների պատշաճ շտկման, կրկնակի գնահատումները մատնանշում են նույն մարտահրավերները: Այնուամենայնիվ, միշտ չէ, որ ձեռնարկվել են առաջարկությունները կյանքի կոչելու և բացերը վերացնելու փաստացի քայլեր:

Ինչ վերաբերում է իրականացման ռեսուրսներին, ապա կան ախտորոշիչ հնարավորություններով մի քանի լաբորատորիաներ, կարողությունների զարգացման և հետազոտական ծրագրեր, որոնք ֆինանսավորվում են Պաշտպանության դեպարտամենտի՝ Սպառնալիքների նվազեցման գործակալության (DTRA) կողմից: Հայաստանը շարունակում է մասնակցել տարածաշրջանային հսկողության նախագծերին, այդ թվում՝ Արևմտյան Ասիայի չղջիկների հետազոտական ցանցին, MediLab Secure-ին և այլն: COVID-19 համավարակը նաև շարժիչ գործոն էր մարդկանց առողջության ոլորտում տեղեկատվության փոխանակման բարելավման համար, որը գրանցվեց առողջապահական կլինիկաների, հիվանդանոցների և լաբորատորիաների կողմից ախտորոշիչ թեստավորման բարելավման և հաշվետվությունների միջոցով: Այս ռեսուրսների մասին լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել զեկույցում: Այնուամենայնիվ, կան ոլորտներ, որոնք բարեփոխման կարիք ունեն, օրինակ՝ ռազմավարությունների

բազմոլորտային վերանայման թույլ մեխանիզմները, ներառյալ ընթացիկ պետական վերահսկողական ծրագրերի և քաղաքականությունների մեջ հետազոտությունների արդյունքների ինտեգրման մարտահրավերը: Պետության և մասնավոր սեկտորի համագործակցության ապահովումը նույնպես կարող է դժվար լինել, քանի որ խիստ օրենքները երբեմն խոչընդոտում են գործարար ոլորտին համագործակցել կառավարության հետ առողջապահական հարցերի շուրջ: Հետևաբար, կա մասնավոր սեկտորի և Արտաքին գործերի նախարարության միջև ընդլայնված համագործակցության հնարավորություն՝ նպաստելու պետություն-մասնավոր սեկտոր համագործակցության զարգացմանը:

Ծրագրերում նոր հետազոտությունների ինտեգրման այս մարտահրավերը մասամբ պայմանավորված է տեղեկատվության փոխանակման համակարգերով, որոնք հաճախ առանձնացված են կամ հասանելի չեն տեղեկատվության հեշտորեն տարածման համար: Օրինակ՝ հաղորդվող տեղեկատվությունը սովորաբար վերաբերում է կոնկրետ ոլորտին և երբեմն հրապարակվում է միայն տպագիր տարբերակով և հեշտ հասանելի չէ առցանց եղանակով: Ավելին, Հայաստանում ակադեմիական հանդեսները սովորաբար տեղեկատվությունը հրապարակում են միայն տպագիր

տարբերակով և հասանելի չեն առցանց, ինչը խանգարում է գիտական բացահայտումների լայնամասշտաբ տարածմանը: Իհարկե, կարող են առաջանալ անվտանգության կամ գաղտնիության հետ կապված օրինական մտահոգություններ՝ կապված առողջապահական անվտանգության խոցելիությանը վերաբերող զգայուն տեղեկատվության տարածման հետ, բայց ավելի հաճախ առողջապահության ոլորտի տեղեկատվությունը չի համապատասխանում այս չափանիշին, ուստի պետք է ավելի հասանելի դառնա այլ նախարարությունների և ակադեմիական շրջանակի փորձագետների համար: Հայաստանում առողջապահական ոլորտի տեղեկատվության՝ իրական ժամանակում փոխանակման հիմնական միջոցը Հիվանդությունների վերահսկման էլեկտրոնային ինտեգրված համակարգն (EIDSS), որի մասին մանրամասն կխոսենք այս զեկույցում: Ավելին, անհրաժեշտ է բարելավել մետատվյալների ստանդարտներն և չափանիշները պահանջվող նվազագույն տվյալների համար, որոնք անհրաժեշտ են տարբեր հարթակներում «Մեկ առողջությանը» կամ կենսահսկողությանը վերաբերող տվյալների փոխանակման համար:

Ի վերջո, փորձագիտական ցանցերին հղում կատարելով՝ հարկ է նշել, որ կան բազմաթիվ աշխատանքային

խմբեր, այդ թվում՝ Իմունականիսարգելման ազգային փորձագիտական խորհրդատվական խումբը, Զոռնոզ հիվանդությունների միջոլորտային փորձագիտական խումբը (ԱՆ-ի կազմում), «Մեկ առողջության» հարցերով միջգերատեսչական աշխատանքային խումբը և Անվտանգության խորհրդի գրասենյակին կից կենսաապահովության և կենսաանվտանգության միջկառավարական աշխատանքային խումբը, որը մշակում է կենսաապահովության և կենսաանվտանգության ազգային նոր կանոնակարգ: Թեև չկա «Մեկ առողջության» հարցերով զբաղվող բարձրաստիճան հանձնաժողով, բարեբախտաբար, Հայաստանը

համեմատաբար փոքր երկիր է, ուստի հաճախ ոչ ֆորմալ հաղորդակցությունը բավականին արդյունավետ է լինում: Այնուամենայնիվ, պետությունը հաստատապես կշահի «Մեկ առողջության» հետ կապված լրացուցիչ փորձագիտական խմբերի հետագա ինստիտուցիոնալացումից: Բացի այդ, Հայաստանի համար օգտակար կլինի նաև մասնակցությունը գլոբալ կամ տարածաշրջանային փորձագիտական ցանցերին, այդ թվում՝ Առողջապահական անվտանգության համաշխարհային օրակարգին (Հայաստանը ներկայումս անդամ չէ): Հայաստանը հանդիսանում է FAO և WOAHOIE անդամ:

13.1.1 Ընդհանուր մարտահրավեր՝ ֆինանսավորման համար

«Մեկ առողջության» համակարգերի և ծրագրերի մշտականություն և կայունություն ապահովելու համար՝ անհրաժեշտ է օրենսդրորեն հաստատել կարգավորող շրջանակները և քաղաքականությունները՝ առանձահատուկ, հետևողական ֆինանսավորման հոսքերով: Պաշտոնական, ինստիտուցիոնալ քաղաքականության և ֆինանսավորման բացակայությունը կարող է խոչընդոտել բազմաոլորտ համագործակցությանը, քանի որ առաջնահերթությունները կարող են փոխվել մի քանի տարին մեկ՝ կախված նրանից, թե որ քաղաքական կուսակցությունն ու պաշտոնյաներն

«Մեկ առողջության» գործարկման և

են պաշտոնավարում: Սահմանափակ ռեսուրսների և մրցակցող առաջնահերթությունների պայմաններում կայուն ֆինանսավորումը հաճախ ամենամեծ մարտահրավերն է «Մեկ առողջության» ծրագրերի իրականացման համար: Սա ճիշտ է բոլոր երկրների համար՝ Հայաստանից մինչև ԱՄՆ և մյուս բոլոր երկրներ: Ազգային պլանի, առողջապահության բնագավառում տեղեկատվական համակարգի կամ կենտրոնական համակարգող մարմնի առկայությունը հիանալի սկիզբ է, սակայն դա բավարար չէ: Ֆինանսավորումն անհրաժեշտ է ծրագրեր իրագործելու և տվյալների փոխանակման

համակարգեր ստեղծելու համար, որտեղ ոլորտները կարող են համագործակցել միմյանց հետ՝ համատեղ ուժերով լուծելու առողջապահության ոլորտի մարտահրավերները:

Այնուամենայնիվ, կարևոր է, որ «Մեկ առողջությունը» կախված է և պետք է կախված լինի կոնկրետ համատեքստից, և ֆինանսավորումը պետք է ուղղել այնտեղ, որտեղ դրա նշանակությունն ավելի մեծ է: Սա նշանակում է, որ ֆինանսավորումն անխուսափելիորեն տարբեր կլինի յուրաքանչյուր երկրում: Սկսում են գործարկվել կամ ընդլայնվել համաշխարհային ֆինանսավորման մեխանիզմները, ներառյալ Pandemic Fund-ը, Nature4Health-ը և Համաշխարհային բանկի «Մեկ առողջության» ծրագրերի ֆինանսավորումը, և երկրները, այդ թվում՝ Հայաստանը, կարող են ֆինանսավորում ստանալ, եթե շարունակեն ցուցաբերել բարձր մակարդակի պետական նվիրվածություն «Մեկ առողջություն» գաղափարին:

Ինչպես շատ երկրներ, Հայաստանը ևս հետևողական պայքար պետք է մղի «Մեկ առողջության» զարգացման համար կայուն ֆինանսավորում ստանալու համար: Հիվանդությունների հայտնաբերման և արձագանքման հիմնական հնարավորությունները մասամբ ֆինանսավորվում են պետական ծրագրերի միջոցով, սակայն վերապատրաստումների համար ֆինանսավորումը նվազագույն է: Հայաստանը նաև բախվում է «Մեկ առողջություն» մոտեցման իրագործման այլ ընդհանուր խոչընդոտների, այդ թվում՝ ոչ բավարար իրազեկվածություն և գիտակցում, թե ինչպես «Մեկ առողջություն» մոտեցումը կարող է օգտակար լինել, ոլորտների միջև հաղորդակցության ոչ հստակ մեխանիզմներ և մարդկային ռեսուրսների պակաս՝ «Մեկ առողջություն» բազմոլորտ մոտեցման կիրառման համար:



13.2 «Մեկ առողջության» մեխանիզմ(ներ)

«Մեկ առողջության» բազմաոլորտ համակարգման մեխանիզմը (MCM) վերաբերում է ցանկացած ֆորմալացված, մշտական խմբի, որը գործում է՝ ամրապնդելու կամ զարգացնելու համագործակցությունը, հաղորդակցությունը և համակարգումը այն սեկտորների միջև, որոնք պատասխանատու են մարդ-կենդանի-շրջակա միջավայր շփման տարածքներում զոռնոգ հիվանդությունների և առողջության հետ կապված այլ խնդիրների լուծման համար²⁷: Բազմաոլորտ համակարգման մեխանիզմը կարելի է հարմարեցնել և, ըստ այդմ, ուշադրություն հատկացնել Հայաստանում գերակա զոռնոգ հիվանդությունների և կամ առողջությանը սպառնացող վտանգներին, ներառյալ Հակամանրէային կայունությանը (AMR), սննդամթերքի անվտանգությանը և այլն:

Ներկայումս Հայաստանում չկա «Մեկ առողջության» բազմաոլորտ համակարգման պետական մեխանիզմ կամ «Մեկ առողջության» ազգային կոմիտե: «Մեկ առողջության» որոշ շահագրգիռ կողմերի շրջանում նկատվում է որոշակի հետաքրքրվածություն, սակայն տարբեր նախարարությունների մասնակցությամբ ազգային կոմիտեի իրավական ձևակերպումը դժվար

բազմաոլորտ համակարգման

կլինի առանց բարձր մակարդակի քաղաքական աջակցության: «Մեկ առողջության» հետ կապված խնդիրների լուծման համար պատասխանատու հիմնական ոլորտը (օրինակ՝ զոռնոգ հիվանդությունների կանխարգելում, հայտնաբերում և արձագանքում) Առողջապահության նախարարությունն է, սակայն, թեև ավելի փոքր չափով, ներգրավված են նաև այլ ոլորտներ, այդ թվում՝ Էկոնոմիկայի նախարարությունը (ներառյալ Գյուղատնտեսության նախարարությունը), վայրի կենդանիների պաշտպանությամբ զբաղվող Շրջակա միջավայրի նախարարությունը, Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը և Անվտանգության խորհրդի գրասենյակը:¹¹ Առողջապահության նախարարությունն ընդունում է նաև այլ հաստատությունների հետ համագործակցության կարևորությունը և գտնվում է Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի, ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի, Կենսաբանության գիտահետազոտական ինստիտուտը և Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) հետ փոխըմբռնման հուշագրերի մշակման գործընթացում:

2022 թվականին՝ ԱՀԿ աջակցությամբ կազմակերպվել է «Զոռնոգ հիվանդությունների դեմ

պայքարի» քառակողմ ուղեցույցի ներդրման բազմոլորտ համակարգման մեխանիզմի (MCM) կիրառման աշխատաժողով, որի ընթացքում մասնակիցների կողմից վեր են հանվել ՀՀ-ում գերակա մարդու և կենդանիների համար ընդհանուր հիվանդությունները, ինչպես նաև նախանշվել են՝ ԱՀԿ, ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության և Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպության համագործակցության արդյունքում երկրներին տրամադրված Ջոնոգ հիվանդությունների դեմ պայքարի քառակողմ ուղեցույցի տեղայնացման և ներդրման քայլերը: Աշխատաժողովին հաջորդել է ԱՄՆ ԿՈՆՀ ծրագրի ենթակապալառու CH2N/ Jacobs կազմակերպության կողմից կազմակերպված աշխատաժողովը, որի ընթացքում քննարկվել են մարդու և կենդանիների համար ընդհանուր հիվանդությունների դեմ պայքարի և «Մեկ առողջության» ներդրման ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի բացերը: Աշխատաժողովների արդյունքներն ամփոփվել են «Ջոնոգ հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման 2023-2027 թվականների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծում, որը իրավական հիմքի հաստատման դեպքում կներկայացվի շահագրգիռ գերատեսչությունների կարծիքին (նախատեսվում է Կենսանվտանգության և

կենսապահովման օրենքի ընդունումից հետո)

Չնայած չկա «Մեկ առողջության» ազգային համակարգող խումբ, կան ավելի ցածր մակարդակի բազմաոլորտ խմբեր, այդ թվում՝ կենսանվտանգության և կենսապահովության միջկառավարական աշխատանքային խումբը (Անվտանգության խորհրդի գրասենյակին կից), որը մշակել է կենսաանվտանգության մասին նոր օրենք և, ի թիվս այլ գործառույթների, պատասխանատու է կենսաբանական նմուշների ներմուծման և արտահանման համար: (Աղյուսակ 9): Գործում է նաև «Մեկ առողջության» հարցերով միջգերատեսչական աշխատանքային խումբ, որը նոր է ձևավորվել և աշխատում է Հայաստանի համար «Մեկ առողջության» ռազմավարության մշակման ուղղությամբ (Աղյուսակ 10): Այս խումբը կազմված է Առողջապահության և էկոնոմիկայի նախարարությունների ներկայացուցիչներից, ինչպես նաև այլ հետազոտողներից և փորձագետներից: Սա «Մեկ Առողջություն» մոտեցման որդեգրման հարցում աճող ազգային հետաքրքրության վառ օրինակ է, սակայն «Մեկ Առողջություն» հայեցակարգի հարցերով զբաղվող խմբերի ֆորմալացումը և ֆինանսավորման ու ռեսուրսների ապահովումը շարունակում է մարտահրավեր լինել: Ոչ պետական մակարդակի այլ

համագործակցությունների օրինակ է Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի (NCDC) և անասնաբուժական ծառայությունների համատեղ ջանքերը լեյշմանիոզի դեմ պայքարում, և Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի (NCDC) և օդերևութաբանական

ծառայությունների միջև համագործակցությունը: Օդերևութաբանական ծառայությունները տրամադրում են տեղեկատվություն եղանակի մասին, որն օգտագործվում է կլիմայի նկատմամբ զգայուն հիվանդությունների կանխարգելման համար:

Աղյուսակ 10. Հայաստանում գործող բազմաոլորտ համակարգման խմբերը

Բազմաոլորտ կոմիտեի/խմբի անվանումը	Ներկայացուցիչներ	Կոմիտեի լիազորությունները կամ պարտականությունները	Արդյո՞ք պաշտոնապես հաստատված է քաղաքականության, նախարարի հրամանով կամ օրենքով:
Անվտանգության խորհրդի գրասենյակին կից կենսաապահովության և կենսաանվտանգության միջկառավարական աշխատանքային խումբ (2018 թ.)	Առողջապահության նախարարություն Էկոնոմիկայի նախարարություն Շրջակա միջավայրի նախարարություն Արտակարգ իրավիճակների նախարարություն Արտաքին գործերի նախ. Արդարադատության նախ. Պաշտպանության նախ. Մնդամթերքի անվտանգության տեսչական մարմին Ազգային անվտանգության ծառայություն Ոստիկանություն	Մշակել կենսաանվտանգության մասին օրենք, վերահսկել կենսաբանական նմուշների ներմուծումը/արտահանումը, քննարկել «Մեկ առողջություն» և Հայաստան եկող կենսահսկողության այլ նախագծերը:	Վարչապետի հրամանագիր
«Մեկ առողջության» հարցերով միջգերատեսչական աշխատանքային խումբ	Առողջապահության նախարարություն Էկոնոմիկայի նախարարություն Ոչ պետական հետազոտողներ և փորձագետներ	«Մեկ առողջության» ռազմավարության մշակում, «Մեկ առողջության» հետ կապված այլ խնդիրներ	Հիմնադրվել է Առողջապահության և Էկոնոմիկայի նախարարությունների համատեղ ջանքերով

Թեև այս օրինակները հստակ առաջընթաց են արձանագրում «Մեկ առողջության» շրջանակում համագործակցության ամրապնդման հարցում, այնուամենայնիվ, դեռևս պահպանվում է ուղղահայաց ծրագրերի միջոցով աշխատելու մշակույթը¹¹: Թեև հանրային առողջապահության ոլորտում միջոլորտային որոշումների կայացումը ճանաչվում է որպես կարևոր, սակայն պարզվել է, որ դրաները դրումը բավականին բարդ է⁴⁶: Ավելին, հանրային առողջապահության շատ ոլորտներում համագործակցության մեխանիզմները (միջանկյալ հանձնաժողովներ և/կամ աշխատանքային խմբեր), թեև պաշտոնապես կիրառվում են, գործնականում դեռևս հիմնականում անտեսված են, օրինակ՝ սովորական տվյալների փոխանակման, համատեղ ռիսկերի գնահատման և բազմաոլորտային որոշումների կայացման հարցերում⁴⁶: Այսպիսով, հիմնական խնդիրը մոտեցման իրագործման մեջ է⁴⁶: «Ամբողջ աշխարհում և Հայաստանում միջոլորտային համագործակցություններին խոչընդոտում է այն պատկերացումը, թե հանրային առողջապահության ոլորտի հիմնական պատասխանատուն առողջապահության նախարարությունն է: Ոլորտների միջև խիստ սահմանազատումները խոչընդոտում են առողջությունը որպես բարձր առաջնահերթության

հավաքական նպատակ ընկալելուն»⁴⁶:

Ի նշան առողջապահության ոլորտում բազմոլորտ համագործակցության բարելավման հարցում հետաքրքրվածության և նվիրվածության՝ 2019 թվականին Հայաստանում տեղի ունեցավ Առողջապահության և Գյուղատնտեսության նախարարությունների, Մանրամթերքի անվտանգության տեսչական մարմնի, ԱՀԿ-ի և Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպության (WOAH) կողմից կազմակերպված «Առողջապահության միջազգային կանոններին (IHR) և անասնաբուժական ծառայությունների կատարմանը (PVS) նվիրված ազգային աշխատաժողովը»: Միջոցառման մասնակիցները եկան այն եզրակացության, որ մարդկանց և կենդանիների առողջության ոլորտների միջև համագործակցության բացերը հիմնականում համակարգային են, այլ ոչ թե կապված են կոնկրետ հիվանդության հետ⁴⁷: Մասնակիցները դասակարգեցին ոլորտները՝ ըստ համագործակցության անհրաժեշտության աստիճանի. 1) գերակա գոտնոգ հիվանդությունների մասին հաղորդակցություն, 2) համատեղ դաշտային հետազոտությունների թրեյնինգների, (դաշտային, լաբորատոր, ներածական

սեմինարներ և այլն) կազմակերպում և արձագանք, 3) տեղական և մարզային մակարդակներում զոռնոզ հիվանդությունների վերաբերյալ տեղեկատվության փոխանակում «Մեկ առողջության» շրջանակում, 4) լաբորատոր համակարգի մշակում, 5) գերակա հիվանդությունների հսկողության ֆունկցիոնալ համակարգի ապահովում, 6) ռիսկերի մշտական համատեղ գնահատման համակարգի ինստիտուցիոնալացում⁴⁷:

Աշխատաժողովում քննարկվեցին նաև համագործակցության առաջնահերթ ոլորտների նպատակները և գործողությունները, սակայն պարզ չէ, թե ինչ առաջընթաց է գրանցվել յուրաքանչյուր նպատակի ուղղությամբ:

Աշխատաժողովի հաջող ավարտը ցույց է տալիս Հայաստանի կառավարության հանձնառությունը՝ բարելավելու միջոլորտային համագործակցությունը, սակայն դեռևս կարելի է ներգրավել լրացուցիչ ոլորտներ, որտեղ կարելի է «Մեկ առողջության» շրջանակում ընդլայնել հնարավորությունները: Օրինակ՝ աշխատաժողովի մասնակիցները հիմնականում եղել են հանրային առողջապահության (մասնակիցների 55%) և կենդանիների առողջապահության (37%) ոլորտներից: Թեև ակնկալվում է, որ այս երկու ոլորտները նշանակալի դեր պետք է խաղան զոռնոզ հիվանդությունների կանխարգելման, հայտնաբերման և արձագանքման

ուղղությամբ Հայաստանի կողմից տարվող աշխատանքներում, կա հնարավորություն, ի թիվս այլ կառույցների, ներգրավելու նաև այլ ոլորտներ, այդ թվում՝ Շրջակա միջավայրի, Պաշտպանության, Ֆինանսների

նախարարությունները, Ազգային անվտանգության ծառայությունը և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը ինչի միջոցով հնարավոր է ավելի ընդլայնել «Մեկ առողջության» համակարգերը և միջոլորտային համագործակցությունը:

Առողջապահության անվտանգության բնագավառում գործողությունների ազգային ծրագրի մշակումը կարևոր հնարավորություն կներկայացնի ավելի համապարփակ մոտեցում ցուցաբերելու նպատակով այս և այլ ոլորտների և շահագրգիռ կողմերի ինտեգրման համար:

Ընդհանուր առմամբ, պարզ է, որ Հայաստանում աճում է «Մեկ առողջություն» գաղափարի նկատմամբ հետաքրքրությունը: Կան նվիրյալներ թե՛ պետական և թե՛ ակադեմիական շրջանակներում, սակայն դեռևս կա «Մեկ առողջության» պաշտոնական ինստիտուցիոնալացման կարիք: Առաջարկվում է, որ Հայաստանը շարունակի իր ջանքերը՝ ստեղծելու «Մեկ առողջության» բազմոլորտ համակարգման գնահատման (MCM) ազգային մեխանիզմ՝ նախարարությունների լայն

ներկայացվածությամբ: Թեև այնպիսի հաստատությունները, ինչպիսիք են Առողջապահության և Էկոնոմիկայի նախարարությունները, արդարացիորեն պատրաստ են առաջնորդելու «Մեկ առողջության» հետ կապված նախաձեռնությունները, այլ ոլորտների, այդ թվում՝ Շրջակա միջավայրի նախարարության, Աննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի, Ազգային անվտանգության ծառայության և ոչ պետական և պետական փորձագետների, ներառյալ

համալսարանական հետազոտողների և մասնավոր սեկտորի ներգրավվածությունը նույնպես արժեքավոր կլինի: «Մեկ առողջության» բազմոլորտ համակարգման գնահատման (MCM) մեխանիզմի ստեղծումից հետո շատ կարևոր է ապահովել ֆինանսական և մարդկային ռեսուրսներ՝ հնարավոր դարձնելու լիազորությունների կատարումը և «Մեկ առողջության» ծրագրերի ու քաղաքականության համակարգումը տարբեր ոլորտներում:

13.3 Միջոլորտային համակարգեր հիվանդությունների մասին հաղորդման և տվյալների փոխանակման համար

Կենսահսկողությունը գործընթաց է, որը ներառում է տվյալների ակտիվ հավաքագրում, վերլուծություն և մեկնաբանում: Այս տվյալները կարող են վերաբերել հիվանդություններին, մարդկանց, կենդանիների կամ շրջակա միջավայրի առողջությանը սպառնացող վտանգներին՝ անկախ դիտավորյալ կամ բնական ծագումից: Ի լրումն հիվանդությունների հնարավոր բռնկումների հայտնաբերման, կենսահսկողությունը ենթադրում է նաև որոշում կայացնողներին և հանրությանը ժամանակին հիվանդությունների կանխարգելման, մեղմման, արձագանքման և վերականգնման մասին ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելու պատասխանատվություն⁴⁸: Ոլորտների միջև տեղեկատվության փոխանակումը և

համագործակցությունը կարևոր նշանակություն ունի հիվանդությունների հսկողության, վաղ հայտնաբերման և արագ արձագանքման համար, քանի որ գոռնոզ հիվանդությունները կարող են փոխանցվել մարդկանց և կենդանիների միջև կամ ընդհանուր շրջակա միջավայրի միջոցով²⁷:


Հայաստանն ունի լավ զարգացած հսկողության հնարավորություններ ինչպես մարդկանց, այնպես էլ կենդանիների առողջության ոլորտներում (ներառյալ գոռնոզ հիվանդությունները), և դրանցից յուրաքանչյուրը նպաստում է Հիվանդությունների համալիր էլեկտրոնային հսկողության համակարգին (EIDSS), որը փոփոխման և ներդրման փուլում է: Հիվանդությունների համալիր

ինտեգրված էլեկտրոնային
հսկողության համակարգի (EIDSS)
նպատակը
համաճարակաբանության,
անասնաբուժության, սննդամթերքի
անվտանգության և փոխանցողների
հսկողության վերաբերյալ տվյալների
ինտեգրումն է լաբորատոր
բաղադրիչի և տվյալների համատեղ
վերլուծության
հնարավորությունների հետ⁴⁹:
Հիվանդությունների համալիր
ինտեգրված էլեկտրոնային
հսկողության համակարգը (EIDSS)
նախագծված է «Մեկ առողջություն»
մոտեցմամբ՝ իրական ժամանակում
անասնաբուժական և
առողջապահական ոլորտների միջև
տեղեկատվության փոխանակում
ապահովելու համար: Այն նաև
ապահովում է
համապատասխանությունը 2005 թ. -ի
Առողջապահության միջազգային
կանոններին:

Լաբորատոր հետազոտությունները
մշտադիտարկվում են նաև
նախարարությունների
կենտրոնական հաստատության
միասնական տվյալների բազայում:
Նախատեսվում է նաև, որ առաջնային
բուժհաստատություններից
ծանուցումներ կուղարկվեն
էլեկտրոնային եղանակով: Այդ
նպատակով դրանք կմիացվեն
Հայաստանի առողջապահության
ոլորտում միասնական
տեղեկատվական համակարգի (IHISA)
բժշկական գրառումների
էլեկտրոնային համակարգին: Նկար
10-ում ցուցադրվում է մարդկանց և
կենդանիների առողջության
վերաբերյալ ընդհանուր տվյալների
օրինակ, որն օգտագործվում է
ընդերային լեյշմանիոզի դեպքերի
համատեղ քարտեզագրման համար:



Նկար 10. Մարդկանց և շնագզինների կենսահսկողության տվյալներն օգտագործվում են Հայաստանում ընդերային լեյշմանիոզի դեպքերի քարտեզագրման համար, 2018 թ.



Ավելին, ինֆեկցիոն հիվանդությունների մասին ծանուցումը Հայաստանում օրենսդրական պահանջ է⁴⁴: Եվ կան դեպքերի ստանդարտ սահմանումներ, որոնք պարբերաբար վերանայվում են՝ համաձայն Միջազգային առողջապահական կանոնների (IHR) և ԵՄ հրահանգների:

Անասնաբուժական ծառայությունները նաև օգտագործում են դեպքերի ստանդարտ սահմանումներ և ծանուցման ենթակա հիվանդությունների մասին հաղորդում են Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպությանը (նախկինում՝ ՕԷ): Պաշտոնական «ծանուցման ենթակա հիվանդությունների

ցանկում» ներառված որևէ հիվանդությամբ ախտորոշված հիվանդ ունեցող ցանկացած բժիշկ պարտավոր է տեղեկացնել Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնին (NCDC): Կան 41 վարակիչ հիվանդություններ և հանրային առողջության անսպասելի/արտասովոր իրադարձություններ, որոնք պահանջում են անհապաղ ծանուցում, և 144 այլ վարակիչ հիվանդություններ, որոնք պահանջում են ծանուցում 24 ժամվա ընթացքում⁴⁴ (Աղյուսակ 11): Չնայած այս օրենսդրական պահանջներին, ոչ բոլոր մասնավոր լաբորատորիաներն են հաղորդում վարակիչ հիվանդությունների՝ իրենց

մոտ գրանցված բոլոր դեպքերի մասին⁴⁴: Այս ոլորտում պետական և մասնավոր սեկտորների

համագործակցությունը կարող է բարելավվել:

Աղյուսակ 11. Հիվանդությունների ոչ ամբողջական ցուցակ, որոնց մասին պետք է առաջնահերթ ծանուցվի

Մարդկանց հիվանդություններ	Կենդանիների հիվանդություններ	զոոնոզները
<ul style="list-style-type: none"> Փոխանցողների միջոցով տարածվող հիվանդությունները 	<ul style="list-style-type: none"> Խոզերի աֆրիկյան ժանտախտ Խոզերի դասական ժանտախտ Տավարի բշտիկային մաշկաբորբ՝ lumpy skin disease Նյութալի հիվանդություն 	<ul style="list-style-type: none"> Սիբիրախտ Բրուցելոզ Ոչխարների և այծերի ծաղիկ Կատաղություն

Հիվանդությունների փոխանցողների դեմ պայքարի առումով ՀՎԿԱԿ-ն իրականացնում է սովորական միջատաբանական և էկտոմակարուծաբանական հսկողություն ամբողջ երկրում՝ որպես փոխանցողների միջոցով տարածվող հիվանդությունների դիտարկման ազգային ծրագրի մաս: Այնուամենայնիվ, հատուկ նշվում է «Մեկ առողջություն» մոտեցման

կիրառման անհրաժեշտությունը՝ ամրապնդելու համագործակցությունը այն ոլորտների ներսում և ոլորտների միջև, (մասնավորապես մասնավոր սեկտորի և ՀԿ-ների հետ), որոնք ներգրավված են հիվանդությունների փոխանցողների դեմ պայքարի պլանավորման, իրագործման, մշտադիտարկման և գնահատման գործընթացներում⁴⁴:

13.3.1 Լաբորատոր տվյալների փոխանակում

Ինչ վերաբերում է լաբորատորիաների հնարավորություններին, ՀՎԿԱԿ -ն պատասխանատու է ընդհանուր լաբորատոր ցանցի համակարգման համար: Գոյություն ունի ՀՎԿԱԿ-ի հիմնական ռեֆերենս լաբորատորիա (նախատեսված ախտաճնության 1 և 2 խմբերի կենսաբանական հարուցիչների համար)՝ 10

մասնագիտացված լաբորատորիաներով, այդ թվում՝ հատուկ վտանգավոր ախտածինների և կենդանի կուլտուրաների ին լաբորատորիան, ինչպես նաև էպիզոոտոլոգիայի, էկտոմակարուծաբանական և էնտոմոլոգիայի լաբորատորիաները⁴⁴ (Նկար 11):

Նկար 11. ՀՎԿԱԿ «Ռեֆերենս լաբորատոր կենտրոնի» մասնաձյուղեր

- Բժշկական իմունոկենսաբանական պատրաստուկների բաժին
- Մանրէաբանական լաբորատորիա
- Վիրուսաբանական լաբորատորիա
- Մակաբուժաբանական լաբորատորիա
- Հատուկ վտանգավոր ախտածինների և կենդանի կուլտուրաների վտանգավոր, բնական օջախների միջոցով փոխանցվող և զոոնոզ վարակների լաբորատորիա
- Սանիտարաքիմիական լաբորատորիա
- Թունաբանական լաբորատորիա
- Ռադիոլոգիայի լաբորատորիա
- Պրիոնային լաբորատորիա
- Էպիզոոտոլոգիայի, էկտոմակաբուժաբանական և էնտոմոլոգիայի լաբորատորիա

Մարդկանց առողջությանը չվերաբերող ոլորտներում հսկողության համակարգերի մշակումը նույնպես կարևոր է զոոնոզ հիվանդությունների բռնկումները և առողջությանը սպառնացող այլ վտանգները հայտնաբերելու և դրանց արագ արձագանքելու համար: Բնապահպանական տվյալները, օրինակ, կարող են օգնել պաշտոնական կառույցներին բացահայտելու կոնկրետ ոլորտները, որտեղ հիվանդության բռնկումների ավելի մեծ հավանականություն կա: Օրինակ, 1996-2012 թվականներին Հայաստանում տուլարեմիայի բոլոր դեպքերի աշխարհատարածական վերլուծությունը ցույց է տվել, որ դեպքերի մեծամասնությունը կապված է տափաստանային բուսականության գոտիների, 1400-ից 2300 մ բարձրությունների և չոր, տաք ամառներով և ցուրտ ձմեռներներով

կլիմայական գոտիների հետ⁵⁰: Այս բնապահպանական գործոնների բնութագրումը կարող է օգտագործվել տուլարեմիայի դեմ պայքարում և բռնկումների արձագանքման բարելավման հարցում: Չնայած դրան, Հայաստանում դեռևս չի իրականացվում բնապահպանական այլ ցուցանիշների (օրինակ՝ սննդամթերք, աշխատավայր, հող և բնակարան) համապատասխան մշտադիտարկում, իսկ վարքագծային և կենսաբանական գործոնների տվյալների հավաքագրումն ու վերահսկողությունը կախված են արտաքին ֆինանսավորումից⁴⁶:

Հայաստանում իրականացվում են գիտական աշխատանքներ որոնք միտված են ուսումնասիրելու մի շարք վայրի կենդանիների զոոնոզները: Արդյունքները զեկուցվում են հաշվետվությունների ձևով: Այս

հետազոտությունների համար իրականացվում են վայրի բնության մեջ նմուշառումներ, որոնք իրականացվում են ՀՀԳԱԱԿՀԳԿ-ի, ԵՊՀ-և ՀՎԿԱԿ-ի աշխատակիցների կողմից:

Բացի այդ, գյուղատնտեսության ոլորտը չունի համաճարակաբանական հսկողության ֆորմալ համակարգ, սակայն կան համակարգի ստեղծման պլաններ¹¹: ՀՀ-ում գործում է անասնաբուժական համաճարակաբանական հսկողության համակարգ: Գոյություն ունեն Անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական ծառայությունների կենտրոն ՊՈԱԿ-ի տարածաշրջանային համաճարակաբանները, որոնք իրականացնում են առաջնային անասնահամաճարակաբանական հսկողություն, ինչպես նաև ՍԱՏՄ տեսուչները, որոնք իրականացնում են կենդանիների վարակիչ հիվանդությունների դեպքերի և բռնկումների հետազոտություն (case investigation, outbreak surveillance):

Տարբեր ոլորտների հնարավորությունների և տեղեկատվության փոխանակման կարողությունների անհավասարակշռությունը տարածված երևույթ է²⁷,

այնուամենայնիվ, կարևոր է հասկանալ յուրաքանչյուր ոլորտի դերը կենսահսկողությանը նպաստելու գործում, քանի որ յուրաքանչյուր ոլորտ բերում է իր կարողությունները և հեռանկարները: Բնապահպանական և գյուղատնտեսական հսկողության վերաբերյալ տվյալների ինտեգրումը Հիվանդությունների համալիր էլեկտրոնային հսկողության համակարգին (EIDSS) բնական հնարավորություն է ստեղծում՝ բարելավելու բազմաոլորտ համագործակցությունը կենսահսկողության ոլորտում՝ տվյալների փոխանակման, ռիսկերի հայտնաբերման և մարդկանց, կենդանիների ու շրջակա միջավայրի զոռնոզ հիվանդությունների մշտադիտարկման միջոցով: ՀՀ ԳԱԱ ԿՀԷԳԿ-ի ընդհանուր մակարուծաբանության և հելմինթոլոգիայի ու մոլեկուլային մակարուծաբանության լաբորատորիաներում պարբերաբար իրականացվում են վայրի կենդանիներից վերցված ախտաբանական նյութի մակարուծաբանական, այդ թվում՝ մակարուծային զոռնոզների հետազոտություններ, սակայն ինֆեկցիոն հիվանդություններին վերաբերող հետազոտություններ նշված կառույցն իրավունք չունի իրականացնել:



13.3.2 Տարածաշրջանային համագործակցություն կենսահսկողության և տվյալների փոխանակման համար

Հայաստանն ակտիվ մասնակից է Կովկասյան տարածաշրջանում կենսահսկողության մի քանի համագործակցային նախագծերի: Այս համագործակցությունները Հայաստանին և հարևան երկրներին հնարավորություն են տալիս կիսվելու տեղեկատվությամբ և հմտություններով, երբ խոսքը վերաբերում է հիվանդությունների բռնկմանը, «Մեկ առողջության» շրջանակում աշխատուժի զարգացմանը և վերապատրաստմանը, մասնագիտական կապերին և այլն: Տարածաշրջանային կենսահսկողության, համագործակցության օրինակները ներառում են.

- Բազմաոլորտ համագործակցության ընդլայնում Մետաքսի ճանապարհի կենսահսկողության ցանցի (BNSR) շրջանակում (2015 – ընթացքի մեջ է): Մետաքսի ճանապարհի կենսահսկողության ցանցը (BNSR) ՀԿ է, որն ուղղված է Արևելյան Եվրոպայում հիվանդությունների վերահսկման ֆունկցիոնալ ցանցի զարգացմանը: Այն կազմակերպում է տարեկան անդրսահմանային հանդիպումներ և կանոնավոր հեռակոնֆերանսներ անասնաբույժների և

համաճարակաբանների միջև: BNSR-ի միջոցով ստեղծվել է Հայաստանի և Ադրբեջանի հետ անդրսահմանային հսկողության մեխանիզմ, որի միջոցով հիվանդությունների բռնկումների դեպքում տրամադրվում են հրատապ և ամենամյա ծանուցումներ:

- «Մեկ առողջության ցանց Միջերկրածովյան և Սահելի շրջաններում արբովիրուսային հիվանդությունների կանխարգելման համար (MediLabSecure)» (2014 – ընթացքի մեջ է): Սա ԵՄ և հարևան երկրների հանրային առողջության և կենդանիների առողջության ոլորտի տարածաշրջանային փորձագետների ցանց է: Հայաստանում աշխատանք է տարվում մարդկանց և կենդանիների վիրուսաբանության լաբորատորիաների, միջատաբանության բժշկական լաբորատորիայի և հանրային առողջապահական և անասնաբուժական ծառայությունների հետ:
- Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի միջև կա նաև տարածաշրջանային համագործակցություն քիմիական, կենսաբանական, ճառագայթային և միջուկային

- պաշտպանության (CBRN) ոլորտում
- Համաճարակների հետախուզական տեղեկատվական համակարգ (EPIS)
- Լեզիոներների հիվանդության հսկողության եվրոպական ցանց
- VectorNet – եվրոպական ցանց՝ մարդկանց և կենդանիների հիվանդությունների հարուցիչների հոդվածոտանի փոխանցողների աշխարհագրական տարածվածության վերաբերյալ տվյալների փոխանակման համար

- Արևմտյան Ասիայի չղջիկների հետազոտման ցանց (WAB-Net) - տարածաշրջանային նախաձեռնություն, որի ստեղծվում է չղջիկների հետազոտությամբ զբաղվող առաջին ցանցը Արևմտյան Ասիայում: Այն նպատակ ունի ինտեգրել չղջիկների վրա արված էկոլոգիական հետազոտությունները վիրուսների հսկողության գործընթացում՝ խթանելու չղջիկների պահպանությունը և պաշտպանելու հանրային առողջությունը և կենդանիների առողջությունը:

13.4 Առաջնահերթությունների պատրաստվածության հիվանդությունների վրա ազդող գործոնների և հիվանդությունների աշխարհագրական թեժ կետերի հայտնաբերումը համատեղ սահմանում և պլանավորում, ներառյալ

հիվանդությունների և հիվանդությունների աշխարհագրական թեժ կետերի հայտնաբերումը

